ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՍՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ
ՇՈՂԵՐ ՄԱՌԼԵՍՏԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ-2026
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51
Ղ 158

Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ
Խմբագիր՝ Ռենա Անդրանիկի Մովսեսյան
բանասիրական գիտությունների թեկնածու

Ղազարյան Հ., Մինասյան Շ.
Ղ 158 Քերականական անկանոնությունները ժամանակակից գրական հայերենում / Հ. Ղազարյան, Շ. Մինասյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2026.- 93 էջ:

Գրքում ներկայացվում են ժամանակակից գրական հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերում առկա անկանոնությունները:

Սույն աշխատանքը մի քայլ է ժամանակակից գրական հայերենի քերականական համակարգում առկա լեզվական անկանոնությունները ամբողջական տեսքով ներկայացնելու, ինչպես նաև մասնագիտական գրականության մեջ չներկայացված որոշ երևույթներ վերլուծելու ճանապարհին:

Նախատեսված է բուհերի բանասիրական ֆակուլտետի ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, հայոց լեզվի ուսուցիչների, լեզվաբանների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են գրական հայերենի լեզվական որակով, լեզվական կանոնիկ, բայց ոչ կենսունակ ու ոչ ընդհանրական, ոչ օրինաչափ իրողությունների գործածությամբ:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-970-21-9
© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2026

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Լեզվական միասնական համակարգի առանձնահատկություններից մեկն այն է, որ պատմական զարգացման տվյալ փուլում լեզուն ունենում է իր ենթահամակարգերին բնորոշ որոշակի հատկանիշներ: Լեզուն պատմական փոփոխություններով փորձում է հասնել ձևերի, իմաստների, կաղապարների միասնության ու ընդհանրության, ուստի պատմական զարգացման յուրաքանչյուր փուլում նա ունենում է իր համակարգին բնորոշ հատկանիշների ամբողջություն: Այսպես, եթե գրաբարի հոլովման ու խոնարհման համակարգերին բնորոշ է թեքականությունը, որը հիմնականում բնութագրվում է բազմիմաստ վերջավորությունների առկայությամբ, ապա ժամանակակից հայերենի համակարգին ավելի բնորոշ են մենիմաստ քերականական վերջավորությունները և քերականական ձևերի վերլուծական կազմությունները: Ու քանի որ լեզվի մեջ քերականական ձևերի կազմության եղանակներն ու դրանց ծառայող միջոցներն ունեն համակարգային բնույթ, ուստի հնարավոր է դառնում բնութագրել լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլ՝ որպես որակապես յուրահատուկ համակարգ: Մյուս կողմից, սակայն, որքան էլ լեզուն ձգտում է իր քերականական կառուցվածքի (և ոչ միայն) միասնականության ու ընդհանրականության, այնուամենայնիվ լեզվի զարգացման **յուրաքանչյուր փուլում պահպանվում են, շարունակում են գործել, սաղմնավորվում են այնպիսի իրողություններ, որոնք չեն համապատասխանում լեզվի տվյալ փուլի համար կենսունակ, առավել ընդհանուր ու միասնական բնույթ**

ունեցող ձևերին: Համակարգային կանոնական ձևերի կողքին գրական լեզվի նորմով կարող են հաստատվել այնպիսի ձևեր, որոնք հակասում են լեզվական համակարգին, այսինքն՝ հակահամակարգային են:

Հայ լեզվաբանության մեջ առաջիններից մեկը Է. Աղայանն էր, որ լեզվի՝ որպես համակարգի բնութագրման մեջ պատշաճ տեղ է հատկացրել հակահամակարգերին: Նա լեզուն համարում է համակարգերի և հակահամակարգերի մի ամբողջություն և նշում. «Գործածելով հակահամակարգային տերմինը լեզվի նկատմամբ՝ մենք դրանով հասկանում ենք այն բոլոր ենթահամակարգերը, մասնահամակարգերը և առանձնակի իրողությունները, որոնք «հակասում» կամ հակադրվում են լեզվի տվյալ փուլի համար կենսունակ, առավել ընդհանուր և միասնական բնույթ ունեցող համակարգերին, ենթահամակարգերին ու մասնահամակարգերին: Հակահամակարգը լեզվի տվյալ փուլում գործառող ավանդական, կողմնակի և սաղմնավորվող համակարգերն են»[1]:

Ըստ Է. Աղայանի՝ ավանդական են այն հակահամակարգերը, որոնք պատմականորեն տվյալ լեզվին են փոխանցվում ու պահպանվում նախորդ շրջանի համակարգերից **(մարդիկ, դստեր, կայսեր, հուսո):** Կողմնակի հակահամակարերը խոսակցական լեզվի, տվյալ լեզվի բարբառների կամ այլ լեզուներից երկարատև շփման ու ազդեցության հետևանքով մուտք գործած համակարգերն են **(Արամենք, ռուսներ, տվի, դրի)**:

[1] Աղայան Է., Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2003, էջ 192:

Սաղմնավորվող հակահամակարգերը լեզվի տվյալ փուլում առաջացած կամ առաջացող **(մի՛ գրի)** և դեռևս ընդհանրություն չստացած, կանոնական մակարդակի չբարձրացած համակարգերն են:

Լեզվական նորմից դուրս գտնվող լեզվաձևը, եթե անգամ համակարգային է, չի կարող ընդունելի լինել, և ընդհակառակը, նույնիսկ լեզվի համակարգին հակասող լեզվաձևը ի վերջո ընդունելի կարող է դառնալ, եթե լեզվում նրա գոյությունն արդեն իսկ անժխտելի փաստ է դարձել համատարած կիրառության պատճառով: Լեզվական նորմը, ի տարբերություն համակարգի, իր մեջ կարող է ընդգրկել անկանոնություններ ու բացառություններ, որոնք վերաբերում են լեզվի բոլոր մակարդակներին՝ հնչյունական, բառային, քերականական:

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ

Լեզվի նկատմամբ յուրաքանչյուր մարդու վերաբերմունքով կարելի է միանգամայն ճշգրիտ դատել ոչ միայն նրա կուլտուրական մակարդակի, այլև քաղաքացիական արժեքի մասին: Անսխալ գրելն ու արտասանելը, ճիշտ մտքեր կառուցելը մարդու գրագիտության առաջին ու տարրական չափանիշներն են: Դրանից հետևում է, որ յուրաքանչյուրն իր խոսքի գրական որակն ու մակարդակն ապահովելու նպատակով պետք է նախ և առաջ տիրապետի և հետևի լեզվական նորմին, որը լեզվական հանրության կողմից որոշակի ժամանակաշրջանում ընտրված և ընդունված կանոնների ամբողջությունն է:

Լեզվական նորմը կարգավորում է խոսքային իրադրությունը, նպաստում լեզվի պայմանականությունների կարգավորմանը, ապահովում խոսքի միակերպությունը, նրա ճիշտ, գեղեցիկ ու նպատակային կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի, թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների, բոլոր օրինաչափությունների տեսակետից: Լեզվի նորմավորումն իր ներքին օրենքներն ունի. մերժում է այնպիսի բառեր, բառաձևեր, որոնք սխալ են, գեղեցիկ չեն, ուրիշ բառերի, բառաձևերի զուգորդությամբ առաջ են բերում շփոթություն, զուրկ են իմաստային ճշտությունից: Լեզվի նորմավորման հիմնական նպատակը փոխադարձ ընկալման հասնելն է, իրար հասկանալի լինելը, հաղորդակցվելը: «Լեզվի նորմավորումը պայմանավորված է՝

ա. տվյալ երևույթի՝ լեզվի համակարգին համապատասխան լինելու,

բ. հաղորդակցության մեջ մշտապես և ընդհանուրի կողմից օգտագործվելու,

գ. հասարակության կողմից հավանության արժանանալու,

դ. կանոնական, օրինական ճանաչում ստանալու սկզբունքների հաշվառումով:

Լեզվի նորմավորման մեծագույն ազդակը նրա ձգտումն է դեպի ընդհանրացում և միօրինականացում»[2]:

Գրական լեզվի նորմավորումը կատարվում է պատմական երկարատև ժամանակաշրջանում՝ լեզվական միջոցների մշակմամբ, դրանց ընտրությամբ և հաստատմամբ:

Այն փոփոխական է և շարժուն. ինչ օրինաչափական չէր անցյալում, նոր շրջանում կարող է դառնալ կանոնական և օրինաչափական, որն էլ, սակայն, վաղը կարող է դուրս գալ նորմի սահմաններից և որակվել որպես ոչ կանոնական:

Նորմավորման հիմնական խնդիրն է որոշել լեզվի զարգացման ներքին օրինաչափություններն ու նոր միտումները, ավանդույթներն ու պատմական ճշտությունը, համակարգայնության ընդհանուր դրվածքը, խոսքային միջոցների կիրառման եղանակները, պատկերների ստեղծման մեթոդներն ու ձևերը, կապակցման նոր ձևերը, շարադասական փոփոխությունները, բառերի արտահայտչական հատկանիշները, արտահայտչական նրբիմաստությունն ու բարեհնչությունը, թարմությունը և այլն:

Լեզվի նորմավորման գործում կարևորվում են նաև լեզվական համակերպության դերը և լեզվի տրամաբանական կողմը:

Լեզվական կանոնների, օրենքների համակարգումը հնարավորություն է տալիս պահանջելու, որ նրանք պահպանվեն թե՛ գրավոր խոսքում, թե՛ բանավոր և լինեն համընդհանուր և պարտադիր բոլորի համար:

---

[2] Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007, էջ 33:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԵՎ ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քերականությունը ուսմունք է լեզվի քերականական կառուցվածքի մասին: Քերականական նորմն էլ քերականության, քերականական համակարգի բոլոր տարրերի գործածության կանոնների ամբողջությունն է, որ հաստատվում է լեզվի զարգացման օրինաչափություններին համապատասխան, ընդհանուր ու պարտադիր է հասարակության բոլոր անդամների համար, ամրապնդված է **պատմականորեն, տրա մաբանական գործոններով, ավանդությամբ, ճշտությամբ և բարեհնչությամբ**[3]**:** Քերականությունը ներկայանում է երկու ենթաբաժնով՝ ձևաբանություն և շարահյուսություն: Քերականական նորմը իր հերթին համապատասխանաբար դրսևորվում է ձևաբանական նորմ և շարահյուսական նորմ հասկացությունների մեջ: Ձևաբանությունը լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է բառերի ձևաբանական կառուցվածքը, նրա միավորները, այդ կառուցվածքի կրած ձևական փոփոխությունները, դասակարգում ձևաբանական միավորներն ըստ իրենց ընդհանուր իմաստի ու ձևաբանական հատկանիշների: Շարահյուսությունը զբաղվում է նախադասությունների և բառակապակցությունների կառուցվածքների ու տեսակների, նրանց կապակցման միջոցների ու եղանակների ուսումնասիրությամբ:

---

[3] Տե՛ս Աղաջանյան Զ., ***Ձևաբանական նորմ և և խոսքի մշակույթի հարցեր,*** Ե., 2007, էջ 42:

Քերականական նորմի սահմանման համար կարևորվում են ինչպես քերականական գիտելիքները, այնպես էլ դրանց ճիշտ և հմուտ կիրառությունը, որոնք էլ ապահովում են խոսքի սեղմությունը, գեղեցկությունն ու բարեհնչությունը:

Սովորաբար քերականության մեջ նորմավորման նպատակը միակերպության ձգտումն է: Այսինքն՝ ձևաբանական և շարահյուսական համակարգերի կանոնավորությունը, նորմին համապատասխանելը ենթադրում են կանոնների միօրինակություն, քերականական նորմի լիիրավ գործառություն, անկանոնությունների, բացառությունների և շեղումների մերժում: Լեզուների պատմության մեջ, սակայն, «քերականական կատարելության» փաստ չի արձանագրվել, քանի որ լեզուն, հակառակ իր կանոնավորման սկզբունքի, իր ընդունած այս կամ այն կանոնի դեմ միշտ էլ ստեղծում է նրա բացառությունը կամ զուգաձևությունը:

Քերականական նորմի ձևավորման գործում կարևորվում է նաև ավանդույթի ու խոսակցական լեզվի դերը:

Հասարակության յուրաքանչյուր սերնդի լեզուն փոխանցվում է որոշակի նորմով սահմանված, որոշակի օրենքներով կանոնարկված: Հաջորդ սերունդը ժառանգում է այն բացառություններով, շեղումներով, զուգաձևություններով հանդերձ: Լինելով ավանդույթը խախտող իրողություններ՝ սրանք քանակական կուտակմամբ նոր որակ են առաջ բերում և դառնում ավանդույթ հաջորդ սերնդի համար: Հետևաբար լեզվական նորմը փոփոխվում է ավանդույթի և ավանդախախտության փոխգործողությամբ:

Լեզվական նորմի փոփոխությունը սերտորեն առնչվում է լեզվի ձևաբանական և շարահյուսական համակարգերի փոփոխությանը: Այս առումով էլ լեզվի փոփոխության ներքին և արտաքին պատճառների քննությունը կարևորվում է այնքանով, որքանով դրանք հանգեցնում են նաև քերականական համակարգի փոփոխության, որն էլ պատճառ է դառնում հնացած օրենքներից ու կանոններից ազատվելու և նոր օրենքներ ու կանոններ սահմանելու:

Լեզվի փոփոխության ներլեզվական պատճառները լեզվի ներքին հակասություններն են՝ նրա անմիօրինակությունը, գործող օրինաչափությունների կողքին հին օրինաչափությունների գոյությունը և նորերի սաղմնավորումը, անկանոնությունների, բացառությունների, շեղումների, զուգաձևությունների առկայությունը, քերականական իմաստների և նրանց քերականական ձևերի միջև գոյություն ունեցող մշտական պայքարը և այլն: Բառային և հնչյունական համակարգերի համեմատությամբ լեզվի քերականական կառուցվածքը շատ դանդաղ է ենթարկվում փոփոխության: Փոփոխությունները էլ ժամանակի փոքր հատվածում մնում են աննկատելի:

Ձևաբանական և շարահյուսական նորմի փոփոխության աղբյուրները տարբեր են՝

ա. ներլեզվական (ներհամակարգային հակասությունները, համասեռությունն ու հակասեռությունը, համաբանական օրենքի գործառությունը).

բ. գրական խոսակցական լեզուն.

գ. տեղային բարբառները, խոսվածքները, հասարակաբանական, ժարգոնային լեզուն.

դ. ստեղծագործական լեզուն (կամ գեղարվեստական լեզուն)[4]:

Քերականական նորմը փոփոխվում է, եթե փոխվում է լեզվի քերականական կառուցվածքը, կատարելագործվելով ճշգրտվում են կանոնները, փոփոխվում են քերականական իմաստները, քերականական ձևերը, քերականական հին ձևերը ստանում են քերականական նոր իմաստ, կամ քերականական հին իմաստներն արտահայտվում են քերականական նոր ձևով:

Ձևաբանական և շարահյուսական նորմի փոփոխության, քերականական իմաստների և քերականական ձևերի փոխվելու, նրանց միօրինակացման, նաև քայքայման ու անկանոն դառնալու հարցում առանձնապես մեծ է համաբանության օրենքի գործառությունը: Համաբանության օրենքը դառնում է մի կողմից՝ քերականական օրենքների մեջ անկանոնություններ մտցնելու, մյուս կողմից՝ քերականական կանոնների մեջ միօրինակություն և կանոնավորություն հաստատելու պատճառ: Սովորաբար քերականության մեջ քերականական իմաստներն արտահայտվում են քերականական մի ձևով, և քերականական նորմը սահմանում է մի ընդհանուր կանոն: Սակայն այդ ընդհանուր ձևերի կողքին լինում են նաև քիչ գործածական այլ ձևեր, որոնք ներառում են սակավաթիվ միավորներ: Դրանք բացառություններ են, անկանոնություն-

[4] Տե՛ս Աղաջանյան Զ., ***Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր,*** Ե., 2007, էջ 76:

ներ, ընդհանուր կանոնից շեղումներ: Քերականական համաբանության նպատակն է ընդհանրական կանոնի հետևողությամբ վերացնել ձևաբանական և շարահյուսական համակարգերում եղած այդ մասնավոր ձևերը: Վճռական դեր կատարելով լեզվի զարգացման ընթացքում՝ համաբանությունը մի կողմից՝ նպաստում է բացառությունների վերացմանը, զուգաձևությունների պարզեցմանը, լեզվի միօրինակացմանը, մյուս կողմից՝ օժանդակում լեզվի նոր զարգացող կենսունակ տարրերի ծավալմանն ու ընդհանրացմանը: Այսինքն՝ քերականության մեջ համաբանությունը, լինելով ընդհանրություններ ստեղծող, կանոնավորող, կարգավորող երևույթ, նաև քայքայող է: Դա հանգեցնում է նրան, որ լեզվական որևէ երևույթ աստիճանական ծավալման ու տարածման, քանակական կուտակման հետևանքով վերածվում է նոր որակի և աստիճանաբար հին որակի տարրերին դուրս մղում համակարգից: Կատարվող փոփոխություններն առաջացնում են փոփոխություն լեզվական նորմի մեջ:

ԳԼՈՒԽ 1

ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ա. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ժամանակակից գրական հայերենի անվանական համակարգում առկա անկանոնությունները վերաբերում են ինչպես անուն խոսքի մասերին հատուկ քերականական կարգերի, այնպես էլ քերականական հատկանիշների դրսևորմանը և տեսակների կազմությանը:

Գոյականի հոգնակին օրինաչափորեն կազմվում է **-եր, -ներ** մասնիկներով: Հոգնակիի կազմության մեջ որոշ դեր ունեն նաև **-իկ, -այք, -ք** մասնիկները: Միավանկ բառերը տանում են **-եր**, բազմավանկ բառերը՝ **-ներ** հոգնակերտները:

Որոշ միավանկ բառերի՝ հին հայերենում ունեցած վերջնահանգ **-ն**-ն, որը եզակիում ընկել է, հոգնակիի կազմության ժամանակ վերականգնվում է, ինչպես՝ **թոռ-թոռներ, մուկ-մկներ**, ընդ որում սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ այդ միավանկ բառերը հանդես են գալիս որպես բաղադրյալ բառի վերջին բաղադրիչ, ինչպես՝ **տղաթոռ-տղաթոռներ, դաշտամուկ-դաշտամկներ**: Անկախ պատճառից՝ արդյունքում ստացվում է մի շարք միավանկ բառերի հոգնակիի՝ **-ներ** մասնիկով կազմություն: Սակայն այս իրողությունը ևս ունենում է շեղումներ. մի քանի միավանկ բառերի գրաբարյան բաղաձայնահաջորդ **-ն**-ն հոգնակիի կազմության ժամանակ չի

վերականգնվում, որի հետևանքով միավանկ բառը օրինաչափորեն ստանում է **-եր** մասնիկը: Այդ բառերից են՝ **մաս(մասն)- մասեր, կողմ(կողմն)- կողմեր, սերմ(սերմն)- սերմեր, ոդ(ոդն)- ոդեր, ռունգ(ունգն)- ռունգեր, անձ(անձն)- անձեր, որդ(որդն)- որդեր, ուլ(ուլն)- ուլեր, բուրգ(բուրգն)- բուրգեր, բուռ(բուռն)- բուռեր//բռեր** և այլն:

Միավանկ բառերից **ռուս** բառը ևս ստանում է **-ներ**, որը բացատրվում է բառի բարբառային արտասանությամբ՝ **(ը)ռուս** կամ **(ու)ռուս,** որով բառը դառնում է երկվանկ և ստանում **-ներ**. վերջինս պահպանվում է նաև գրական հայերենում **ռուս** արտասանության դեպքում[5]:

Բազմավանկ բառերից **ստեղն, եղեգն, բևեկն** պարզ, նաև **ազն, ակն, եղն, ոտն** երկվանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերը **-եր** մասնիկ են ստանում՝ **ստեղն- ստեղներ, եղեգն- եղեգներ, բևեկն- բևեկներ, արքայազն- արքայազներ, որմզդեղն- որմզդեղներ, շողակն- շողակներ, հետիոտն- հետիոտներ** և այլն[6]: Կարծում ենք՝ այս բառերի՝ հոգնակիում **-ներ** ստանալուն խանգարում է բառավերջում բաղաձայնների և հատկապես **-ն-**ի առկայությունը. բաղաձայնների կուտակումը կառաջացնի անբարեհնչություն:

-Իկ մասնիկով հոգնակի է կազմում **մարդ** բառը և այն բաղադրյալ բառերը, որոնցում վերջին **մարդ**-ը վերջնաբաղադրիչ է՝ **մարդ-մարդիկ, նախամարդ-նախամարդիկ, տղամարդ- տղամարդիկ:**

---

[5] Տե՛ս Աբրահամյան Ս. և այլք, ***Ժամանակակից հայոց լեզու,*** հ. 2, Ե., 1974, էջ 49:

[6] Տե՛ս Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., ***Հայոց լեզու. Ձևաբանություն,*** Ե., 2008, էջ 17:

Կին բառի հոգնակին գրաբարաձև է՝ **կանայք:** Խոսքին հռետորականություն հաղորդելու նպատակով որպես կոչական գործածվում են նաև **տիկնայք** և **պարոնայք** ձևերը, սակայն նրանց համար կանոնական է **-ներ**-ով հոգնակիակազմությունը: Միավանկ գոյականական վերջնաբաղադրիչ ունեցող և իր անկախ գործածության իմաստը պահպանող բառերի կազմության ընդհանուր օրինաչափությունից շեղում պետք է համարել **կին** վերջնաբաղադրիչով մի քանի գոյականների հոգնակիի կազմությունը **-ներ** մասնիկով, ինչպես՝ **տիկիններ, քեռակիններ, քավորակիններ, երեցկիններ:**

Ըստ Ջահուկյանի՝ պատմական առումով ժամանակագրական տարբեր մակարդակներից են գալիս **կին** և **մարդ** բառերի հոգնակիի կազմության եղանակները: **Կին** բառի հոգնակիի կազմության եղանակը շատ հին է, այն առանձնահատուկ է եղել նույնիսկ համահնդեվրոպական շրջանում**: Մարդ** բառի հոգնակիի կազմության եղանակը սահմանափակ և առանձնահատուկ բնույթի էր նաև հին հայերենի շրջանում[7]:

Ինչ վերաբերում է **-իկ** մասնիկի ծագմանը, ապա, ըստ Ջահուկյանի, այն առաջացել է **-իկ** ածանցից. «Եթե տվյալ ածանցը, բացի հավաքական իմաստ արտահայտելուց, ունի նաև այլ կարգի իմաստներ, և հավաքական իմաստ արտահայտելը նրա համար գլխավորը չէ (հմմտ. **-ություն**-ը **ուսանողություն, ուսուցչություն** և այլ բառերի մեջ), ապա մենք գործ ունենք իսկական հավաքական բառերի հետ.

[7] *Տե՛ս* Ջահուկյան Գ.,***Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները,*** Ե., 1974, էջ 184:

այլապես տվյալ ածանցը յուրահատուկ միջին դիրք է գրավում հավաքական ածանցի ու հոգնանիշ վերջավորության միջև: Այս դեպքում հող կա անցման համար: Հայտնի է, օրինակ, որ արդի գրական հայերենի և բարբառների հոգնանիշ վերջավորությունները ծագում են նախկին հավաքական ածանցներից: Կարելի է ասել նույնիսկ, որ դրանցից **-եր**-ը և **-ներ-**ն են միայն վերածվել իսկական հոգնակերտ վերջավորությունների, իսկ **-իկ-**ը և **-այք**-ը դեռ լիովին չեն խզել կապերը ածանցներից և պահպանում են հավաքականության որոշ երանգ»[8]:

-Իկ մասնիկի առանձնահատկությունը դրսևորվում է նաև **մարդ** բաղադրիչով բաղադրյալ բառերի կազմությանը նրա մասնակցությամբ, ինչպես՝ **մարդկություն, մարդկային, մարդկայնորեն** և այլն: Նման բառերում **-իկ** մասնիկը դիտվում է հիմքակազմիչ:

-Ություն ածանցով կազմված այն վերացական գոյականները, որոնք, ցույց տալով հատկանիշներ, մտածվում են որպես առարկա և չեն կարող կապակցվել թվականով, ժամանակ ցույց տվող դերանուններով ու գոյականով արտահայտված որոշչի հետ, չունեն հոգնակի թիվ: Կան, սակայն, հատկանիշի իմաստ ունեցող որոշ գոյականներ, որոնք կարող են ցույց տալ տվյալ հատկանիշի մեկից ավելի մասնավոր արտահայտություն, ուստի և ունենալ հոգնակի թիվ, ինչպես՝ **քաջագործություններ, ընդունակություններ, մոլորություններ, կամայականություններ, հաջողություններ** և այլն:

[8] Ջահուկյան Գ. , նույն տեղում, էջ 185-186:

Անկանոնության դրսևորում են նաև ածականներից **-ներ** հոգնակերտով կազմված գոյականները, որոնք բույսերի, կենդանիների տիպերի, դասերի, կարգերի, տեսակների, որոշ հանքատեսակների, քիմիական նյութերի խմբերի անվանումներ են, ինչպես՝ **բարդածաղկավորներ, թառափանմաններ, անողնաշարավորներ, վարդազգիներ, երկկենցաղներ** և այլն: Այս բառերում **-ներ**-ը ածականներից գոյական է կազմում՝ միևնույն ժամանակ արտահայտելով հոգնակիության իմաստ, այսինքն՝ այն բառակազմական-քերականական մասնիկ է:

Ժամանակակից գրական հայերենի անվանական, մասնավորապես հոլովական համակարգի մասնիկները գլխավորապես մենիմաստ են. յուրաքանչյուր վերջավորություն մեկ իմաստի կրիչ է. **ընկերներիցս** բառաձևում **-ներ**-ը արտահայտում է թվի, **-ից**-ը՝ հոլովի, **-ս**-ն՝ առկայացման քերականական իմաստ: Այս ընդհանրությունից շեղվում են **-անք, -ենք, -ոնք, -ունք** մասնիկներով գոյականները, որոնց ուղիղ ձևում հանդես եկող **-ք** մասնիկը, ինչպես նաև սեռական տրականի **-ց**-ն արտահայտում են և՛ հոգնակի թվի, և՛ հոլովի իմաստ: Նշանակում է՝ այս դեպքում ունենք մասնիկների բազմիմաստություն:

Ժամանակակից գրական հայերենի տրական հոլովը ունի 8 հոլովիչ, որոնցով և անվանվում են ժամանակակից հայերենի 8 հոլովումները: Անկախ այս կամ այն հոլովման պատկանող բառերի քանակից՝ բոլոր այս ութ հոլովումներն էլ համարվում են կանոնական և օրինաչափ: Օրինաչափությունից շեղվում է **աղջիկ, սեր** և **մահ** բառերի հոլովումը. **Աղջիկ**-ը հոլովվում է արտաքին թեքման **ա** հոլովումով, **սեր**-ը՝

արտաքին թեքման **ո** հոլովումով, իսկ **մահ-**ը՝ **վան**: Ընդ որում **սեր** բառի հոլովման անկանոնությունը չի սահմանափակվում միայն տրականում **ո** արտաքին հոլովիչ ստանալով. Տրականի հոդավոր տարբերակը ունենում է **սիրուն** ձևը, որը առաջացել է հետևյալ հնչյունափոխությամբ՝գրբ. **սէր-սիրոյ- սիրոյն, աշխ. սիրո-սիրույն-սիրուն**[9]**: Սեր** բառի բացառականում **-ց-** ից առաջ ևս հանդես է գալիս **ու** մասնիկը՝**սիր-ու-ց,** մինչդեռ բացառականում **-ուց** վերջավորություն ունենում են միայն **ու** հոլովման պատկանող բառերը: **Սիրուց** բառաձևի **ու**-ն, ամենայն հավանականությամբ, գալիս է տրականից, քանի որ, ինչպես հայտնի է, բառերի մի մասի բացառականը կազմվում է տրականի հիմքից: Տրականում հոդի առկայությամբ **ո-**ի **ու-**ով փոխարինումը տեղի է ունենում ոչ միայն **սեր**, այլև **աստված** բառում՝ **աստծո+ն> աստծուն**, ընդ որում խոսքը ոչ միայն **ն,** այլև **ս, դ** հոդերին է վերաբերում՝ **սիրուս, աստծուդ**[10]**:**

Այլաձև հոլովման շարքը դասվող մյուս բոլոր բառերը **(հույս, լույս, սուգ, աստված, հավատ, մամուլ, խնդիր, պատիվ, հուր(ո արտաքին հոլովիչ), կայսր, դուստր (ե ներքին հոլովիչ), հանգիստ, կորուստ, ծնունդ, գալուստ (յան** արտաքին հոլովիչ) ունեն նաև կանոնավոր **ի** հոլովում, իսկ **աստված** բառը՝ կանոնավոր **ու** հոլովում:

Քննվող բառերի այլաձևությունը պատմական հիմք ունի, որոշ կապացություններում պահպանվում է գրաբարյան

---

[9] *Տե՛ս* Ասատրյան Մ, ***Ժամանակակից հայոց լեզու. Հնչաբանություն***, Ե., 1989, էջ 75:

[10] *Տե՛ս* Ջահուկյան Գ., ***Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները,*** Ե., 1974, էջ 210:

հոլովաձևը՝ **սգո թափոր, հավատո հանգանակ, մամլո ասուլիս, խնդրո առարկա, կորստյան ցավ** և այլն:

Այլաձև է համարվում նաև **մարդիկ** և **կանայք** բառերի հոլովումը՝ **մարդկանց, կանանց:**

Սովորաբար գոյականի եզակի և հոգնակի հոլովաձևերի միջև տարբերությունը լինում է քերականական թվի հարցում, իսկ բուն հոլովական տեսակետից դրանք համապատասխանում են իրար: Սակայն ժամանակակից հայերենում որոշ բառերի եզակի և հոգնակի ձևերի միջև լինում է անհամապատասխանություն: Այսպես՝ **լեռ, տուն** բառերը և սրանցով վերջացող բաղադրյալ բառերը, **-ում ածանցով** վերջացող բառերի զգալի մասը, **առաջ** բառը, եզակի հարացույցում չունենալով ներգոյական հոլով, հոգնակիում ունեն, օրինակ՝ **լեռում** հոլովաձև չկա, բայց կա **լեռներում**:

Բաղաձայնահաջորդ **ն-**ով վերջացող միավանկ բառերը (նաև որոշ բազմավանկ բառեր՝ **ամառն, ձմեռն, շարժումն**) ժամանակակից հայերենում ենթարկվում են **ան** արտաքին հոլովման, որը առաջացել է **ա** ներքին հոլովիչի և բառավերջի **ն**-ի կցումով: Այս միավանկ բառերի հոգնակիի կազմության ժամանակ ևս **ն**-ն վերականգնվում է (կան բացառություններ, որոնց մասին խոսվել է), ինչպես՝ **բեռ- բեռան- բեռներ, գառ- գառան- գառներ:** Այս բառերի շարքից դուրս են մնում **հարս, մատ, ակ, կուռ** (վերջինս բնորոշ է խոսակցական լեզվին) բառերը, որոնք հոգնակիում ստանում են **-ներ**, բայց հոլովվում են **ի** հոլովմամբ, ինչպես՝**հարս- հարսներ- հարսի, մատ- մատներ-մատի, ակ-ակներ-ակի:**

Թեք հոլովաձևերի հոլովական մասնիկները կարող են ավելանալ ինչպես բառի անհնչյունափոխ, այնպես էլ հնչյունափոխված հիմքերին: Չանդրադառնալով օրինաչափորեն կատարվող հնչյունափոխություններին **(ի>ը, ի↑, ու>վ, ու↑, ե>ի** և այլն)՝ ներկայացնենք եզակի օրինակներում կատարվող դեպքերը.

-անուն բառի հոլովման ժամանակ տեղի է ունենում ոչ թե ու>ա, այլ 0>ա հերթագայություն,

-կաշի բառի հիմքը բնորոշվում է **ի>վ** հնչյունափոխությամբ[11],

-աստված բառի հիմքը բնորոշվում է **վա>ը** հերթագայությամբ[12],

-կանայք բառի հոլովման ժամանակ կատարվում է **յ-ք>ն-ց** հերթագայություն:[13]

Հետաքրքիր իրողություն է, որ գրաբարյան բաղաձայնահաջորդ **ն-**ն, որը վերականգնվում է բառակազմության, հոգնակիի կազմության և պատմական դիտարկմամբ նաև տրական հոլովում, միայն **դուռ** բառի դեպքում առկա է նաև բացառական և գործիական հոլովաձևերում: Հմմտ.՝ **դուռ-դռնից-դռնով, բայց՝ ձուկ- ձկից- ձկով, բեռ- բեռից- բեռով:**

Նույն բառի հոլովական այս կամ այն իմաստը տարբեր ձևերով արտահայտելու երևութը առաջացնում է հոլովական

[11] Տե՛ս Ջահուկյան Գ., ***Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները,*** Ե., 1974, էջ 186:

[12] Տե՛ս նույնը, էջ 186:

[13] Տե՛ս նույնը, էջ 186:

զուգաձևություններ, որոնք շատ են հատկապես տրական հոլովում: Ինչպես նշում է Մ. Ասատրյանը, զուգաձևությունների առկայության հիմնական պատճառը ժամանակակից հայերենի ընդհանրական **ի** հոլովման գերիշխող դիրքն է[14]: Հետևաբար տրական հոլովում զուգաձևություն ունեցող բոլոր բառերի հոլովման տիպերից մեկը **ի** հոլովումն է: Բացառություն են կազմում միայն **տարի**, **աստված, ամառ, ձմեռ** բառերը, որոնք տրականում ունեն համապատասխանաբար **ու//վա**, **ու//ո, ան//վա** հոլվիչները, ինչպես՝ **տարու//տարվա, աստծու// աստծո, ամռան//ամառվա, ձմռան//ձմեռվա:**

Գոյականի կարևոր քերականական կարգերից է նաև առկայացումը, որը իրականանում է հոդերի միջոցով: Հոդերի արտահայտած իմաստներն ու գործառության դեպքերը հիմնականում օրինաչափ են ու ընդհանրական: Ընդհանուր օրինաչափությունից կան եզակի շեղումներ:

Ժամանակակից հայերենում հատուկ անունները ստանում են որոշիչ հոդ՝ անկախ հատուկ անվան փոխառյալ լինել-չլինելուց, նաև անկախ այն հանգամանքից, թե այդ հատուկ անունը եզակի է գործածված, թե առանձնահատուկ դեպքերում դարձել է հոգնակի: Այս օրինաչափությունից շեղվում են **-անք, -ենք, -ոնք, -ունք** մասնիկներով հոգնակիները, որոնք անհոդ են թե՛ ուղիղ, թե՛ թեք հոլովաձևերում, ինչպես՝ **Գրիգորենք-Գրիգորենց, Վեդունք-Վեդունց, Վարդանանք-**

[14] Տե՛ս Ասատրյան Մ., ***Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն***, Ե., 1989, էջ 85:

Վարդանանց: Հոդ չեն ստանում նաև այս մասնիկներով կազմված հասարակ անունները (**պապոնք, հերանք), մարդիկ, կանայք (տիկնայք, պարոնայք**) բառերը: **Աստված** բառը եզակի ուղիղ ձևում միշտ անհոդ է, իսկ տրականում և հոգնակի ձևերում կարող է լինել հոդով՝ **աստծուն, աստվածները, աստվածներին**: Պետք է նկատի ունենալ, որ **աստված** բառը հատուկ անուն որոշիչ ունենալու դեպքում եզակի ուղիղ ձևում հանդես է գալիս հոդով, օրինակ՝ **Տիր աստվածը, Վահագն աստվածը** և այլն:

Ժամանակակից հայերենում բառահարաբերական ձևույթները բառին կցվում են որոշակի հաջորդականությամբ: Այսպես՝ անվանական համակարգում այդ հաջորդականությունը ենթադրում է հոգնակերտ վերջավորություն, հոլովական վերջավորություն, հոդ: Սակայն փոխանուն տրականի հոլովման ժամանակ հոլովական վերջավորությունները հանդիպում են որոշիչ հոդից հետո, օրինակ՝ **Հակոբին-ը, Հակոբին-ի-ն, Հակոբին-ից, Հակոբին-ով, Հակոբին-ում** և այլն[15]:

Ածական խոսքի մասը չունի գոյականին հատուկ քերականական հատկանիշներն ու դրանց դրսևորման բազմազանությունը: Ուստի և ածական խոսքի մասի համակարգում քիչ են գործող օրինաչափությունից շեղումներն ու բացառությունները:

Կան մի շարք որակական ածականներ, որոնք, ունենալով գերադրական աստիճան, չունեն բաղդատական՝

[15] Տե՛ս Ջահուկյան Գ.,նույն տեղում, էջ 212:

տարբեր-ամենատարբեր, առաջին- ամենաառաջին, վերջին-ամենավերջին և այլն:

Հայտնի է, որ ածականի գերադրական աստիճանի կազմությանը մասնակցում են **ամենա-** և **-ագույն** ածանցները, որոնց համատեղ գործածությունը նույն բառի մեջ համարվում է սխալ: Այս երևույթը թույլատրելի է միայն մարզական մի երկու տերմինի մեջ, որոնք պատճենված են ռուսերենից **(ինչպես՝ наилегчайший вес-ամենաթեթևագույն քաշ)** և կազմվել են չափի հատկանիշի բազմաստիճանություն արտահայտելու պահանջով[16]:

Ածականը ունի փոխանվանաբար գործածվելու հատկություն, որի հետևանքով ստանում է հոդ, հոլովվում **ի** հոլովմամբ եզակի և հոգնակի թվերով և նախադասության մեջ կատարում գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններ: Ընդ որում փոխանուն բառի **ի** հոլովմամբ հոլովվելը վերաբերում է ոչ միայն ածականին, այլև բոլոր փոխանուններին: Այս օրինաչափությունից շեղվում է միայն **բարի** բառը, որը հոլովվում է **ու** հոլովմամբ՝ **բարու-բարուց** և այլն: Կարծում ենք՝ պատճառը համաբանությունն է, քանի որ **ի**-ով վերջացող բառերը հիմնականում ենթակվում են **ու** հոլովման: **Սառը(ն), դառը(ն), խառը(ն)** ածականները թե՛ որպես բուն ածական, թե՛ որպես փոխանուն ածական միշտ հանդես են գալիս նույն ձևով: Օրինակ՝ **Քաղցր և դառը** սուրճերից նախընտրում եմ **դառը** (այսինքն՝ **դառը սուրճը**):

---

[16] Տե՛ս Աբրահամյան Ս., ***Ժամանակակից գրական հայերեն,*** Ե., 1981, էջ 167:

Փոխանվանաբար գործածվող ածականը նախադասության մեջ կարող է ենթակայի պաշտոն կատարել: Դրվելով ուղղական հոլովով՝ փոխանուն ածականը որպես օրինաչափություն պետք է ունենա հոդ, ինչպես՝ **Մեծը** ներս մտավ: **Կուշտը** սովածին մանր է բրդում: Սակայն նկատելի է մի հետաքրքիր իրողություն. եթե փոխանուն ածականը ունենում է **մի** անորոշ դերանվամբ արտահայտված որոշիչ լրացում, ապա ածականը հոդ չի ստանում: Օրինակ՝ **Մի կարճահասակ** մյուսին չպիտի նախանձի: **Մի տձև** մյուս տձևից ոչնչով չի տարբերվում: Հասկանալի է, որ երևույթի պատճառը **մի** դերանվան արտահայտած անորոշության մեջ է, քանի որ **մի** դերանուն որոշչի որոշյալը միշտ անորոշ է: Բայց մյուս կողմից էլ փոխանուն ենթական որպես օրինաչափություն պետք է հոդ ունենա: Ավելացնենք նաև, որ քննվող իրողությունը վերաբերում է նաև հարակատար և ենթակայական դերբայներին: Օրինակ՝ **Մի հարբած** օրորվելով անցավ ճանապարհը: **Մի երգող** լռեց, մյուսները հետևեցին նրան: Հայտնի իրողություն է, որ ածականը, հարակատար և ենթակայական դերբայները, հաճախակի գոյականաբար գործածվելով, կարող են վերածվել գոյականի, ինչպես՝ **աղքատ, հարուստ, մութ, ցուրտ, հավելված, կոտորած, ծնող, ուսանող** և այլն: Սակայն վերը բերված նախադասությունների ընդգծված օրինակներից երևում է, որ դրանք չեն կարող ընկալվել որպես գոյականացված ածական կամ դերբայ:

Թվական խոսքի մասի համակարգում առկա շեղումերը ևս քիչ են: **Ինն/ինը** և **տասն/տասը** թվականները, ինչպես նաև

այն բաղադրյալ թվականները, որոնցում որպես վերջին բաղադրիչ հանդես է գալիս **ինը(ն)** արմատը, փոխանվանական գործածության ժամանակ ուղղական հոլովում որոշիչ հոդ չեն ստանում[17]: Միայն նախադասության մեջ է հնարավոր դառնում որոշել նման թվականի թվականական կամ փոխանվանական կիրառությունը: Օրինակ՝ Ունի **քսանինը** գիրք, որոնցից **տասնինը** իրենը չեն: Ընդգծված բառերից առաջինը ունի թվականական, երկրորդը՝ փոխանվանական կիրառություն:

Երկու թվականը գոյականաբար գործածվելիս հոդից առաջ ստանում է գրաբարի հոգնակի հայցականի **ս-ն՝ երկուսը:**

Քանակական թվականներից **-րորդ** և **-երորդ** ածանցներով կազմվում են դասական թվականներ: Դասական թվական չի կազմվում միայն **մեկ** թվականից: Վերջինիս համար գործածվում է **առաջին** բառը, որը կազմվում է **աջ** արմատից և **-առ** ու **-ին** ածանցներից: **Առաջին** բառը յուրահատուկ է նաև նրանով, որ ունի ածականի իմաստ, որի հետևանքով ածանցմամբ գերադրական աստիճան է կազմում, ինչպես՝ **հիմնարկի ամենաառաջին մասնագետը, իմ ամենաառաջին անելիքը** և այլն: Բանն այն է, որ այս բառը նախապես ունեցել է ածականի իմաստ, ինչը վկայում են նրա՝ ՆՀԲ-ում բերված իմաստները՝ **նախկին, սկզբնական, իշխանական, գլխավոր, լավագույն, ազնվագույն** և այլն: Չնայած պետք է նշել, որ գրաբարի քերա-

[17] Տե՛ս Պետրոսյան Հ., ***Գոյականի առումները հայերենում,*** Ե.,1960, էջ 86:

կանության գրքերում իսկ **առաջին** բառը ներկայանում է որպես դասական թվական: Արդի հայերենի բացատրական բառարաններում ևս նշվում է **առաջին** բառի ածականական (հիմնական, գլխավոր, անհրաժեշտ) և նույնիսկ գոյականական (ջրիկ կերակրատեսակ իմաստով) իմաստները, բայց արդեն որպես թվականական իմաստից ածանցված:

Ցույց տալով առարկայի թվային կամ քանակային հատկանիշ՝ թվականները ունենում են որոշչային կիրառություն: Բացառություն են կազմում միայն բաշխական թվականները, որոնք կարող են արտահայտել և՛ առարկայի հատկանիշ, և՛ գործողության հատկանիշ: Օրինակ՝ **Յոթ-յոթ** ծաղիկ նվիրեցի (թվական, որոշիչ): **Յոթ-յոթ** նվիրեցի (թվական, չափի պարագա):

Ժամանակակից գրական հայերենում կան թվականների կրկնությամբ կազմված տարարժեք բառեր, որոնք տարբերակվում են խոսքում: Եթե թվականի կրկնությամբ կազմված բառը դառնում է առարկայի լրացում և արտահայտում բաշխականության իմաստ, նշանակում է այն թվական է՝ որոշչային կիրառությամբ: Օրինակ՝ **Այդ օրը հինգ-հինգ գիրք բաժանեցի**: Եթե դառնում է ներգործական սեռի բայի լրացում, որի լրացյալը ենթադրվում է, այն մնում է թվական, բայց ունենում պարագայական կիրառություն: Օրինակ՝ **Այդ օրը հինգ-հինգ բաժանեցի**: Իսկ եթե դրվում է չեզոք սեռի բայի վրա, դառնում է մակբայ և ունենում կրկին պարագայական կիրառություն: Օրինակ՝ **Նրանք հինգ-հինգ շարվեցին և հետո քայլեցին:**

Մեկ թվականից իմաստային զարգացմամբ առաջացել է համանուն կապ՝ **տնով մեկ, աշխարհով մեկ**, իսկ նրա որոշյալի ձևի իմաստային զարգացումով՝ **մեկը** անորոշ դերանունը:

Ի տարբերություն ածականի ու թվականի՝ դերանունը հարուստ է քերականական հատկանիշներով, որոնք դրսևորվում են առավել յուրահատուկ ու բազմազան ձևերով, քան որևէ այլ խոսքի մասի համակարգում: Դա բխում է դերանվան՝ որպես յուրահատուկ խոսքի մասի էությունից: Բանն այն է, որ դերանունները խոսքի մեջ կարող են փոխարինել գոյական, ածական, թվական, մակբայ խոսքի մասերին և ըստ այդմ էլ ունենում են համապատասխան խոսքի մասի քերականական հատկանիշներ: Բայց նույնիսկ այս դեպքում չկա միօրինակություն. կան առարկա ցույց տվող դերանուններ, որոնք չեն հոլովվում (ինքս, ինքդ, այս, այդ), կան գործողության հատկանիշ ցույց տվող բառեր, որոնք կարող են հոլովվել (այստեղ, այնտեղ): Դերանունը առանձնահատուկ է նաև հոլովի ու թվի քերականական կարգերի դրսևորման ինքնատիպությամբ ու անմիօրինակությամբ: Արդի հայերենի մի շարք դերանուններ՝ **ես, դու, նա, մենք, դուք, ինքը** (անձնական), **սա, դա, նա**(ցուցական), **ով** (հարցական կամ հարաբերական), **իրար** (փոխադարձ), հոլովվում են անվանական-դերանվանական խառը հոլովմամբ, քանի որ հարացույցի անդամների մի մասը ձևավորվում է ինքնատիպ՝ սուպլետիվ ձևով, իսկ մյուս մասը (բացառական, գործիական, ներգոյական) անվանատիպ կազմությամբ:

Ի տարբերություն գոյականի՝ դերանվան հոգնակիի կազմության մեջ բավական ակտիվ է **-ք** մասնիկը: Դերանվան հոգնակին կարող է կազմվել եզակի ուղղականից (**դու+ք, ինչ+եր**), եզակի տրականից (**սրան+ք, իրեն+ք**) կամ բոլորովին այլ արմատից **(ես-մենք)**: **Ով** դերանվան հոգնակիի կազմությանը մասնակցում են երկու հոգնակերտներ՝ **-ք, -եր:** Թվի քերականական կարգի դրսևորման յուրահատկությունը երևում է ոչ միայն հոգնակիի կազմության, այլև նրա արտահայտած իմաստի մեջ: Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների հոգնակիները ցույց են տալիս որևէ ընդհանրությամբ միավորվող մարդկանց խումբ, որի մեջ մտնում է նաև խոսողը(**մենք**) կամ խոսակիցը **(դուք)**:

Դիմային հարաբերությամբ անձ ցույց տվող դերանուններից միայն **ինքը** դերանունը կարող է հանդես գալ իրի փոխարեն: Օրինակ՝ Ժամանակը ամեն ինչ **իր** տեղն է դնում: Հասկանալի է, որ այս դեպքում փոխաբերական գործածություններ նկատի չենք ունենում: **Ոմն** դերանունը գրաբարում անձ էր ցույց տալիս անորոշ նշանակությամբ, հոլովվում էր, ուներ գոյականական և ածականական իմաստ ու կիրառություն: Ժամանակակից հայերենում այն ունի միայն ածականական իմաստ ու կիրառություն, նշանակում է «**ինչ-որ**», չի հոլովվում և դրվում է միայն անձ ցույց տվող բառերի վրա՝ **ոմն ուսանող, ոմն երգիչ**: **Ոմն** դերանվան հոգնակին՝ **ոմանք,** ունի միայն գոյականական նշանակություն, կիրառություն, հոլովվելու հատկանիշ: Ստացվում է, որ նույն բառի եզակին ունի ածականի իմաստ, կիրառություն, իսկ հոգնակին՝գոյականի: **Այլ** դերանունը ունի առարկայի հատկանիշի իմաստ՝ **այլ**

կարծիք, **այլ** հարց: Առարկայի իմաստ արտահայտելու համար ստանում է միայն **և** հոդ՝ ձեռք բերելով փոխանվանական գործածություն: Սակայն ի տարբերություն փոխանվանաբար գործածվող մյուս բառերի՝ **այլն** ձևը, ինչպես նաև հոգնակի ուղղականի **այլք** ձևը կիրառվում են միայն հաջորդաբար թվարկվող բոլոր առարկաները չնշելու, թվարկումը սահմանափակելու նպատակով: **Այլն** ձևի յուրահատկությունը նաև այն է, որ թեք հոլովներում հոլովական վերջավորությունը դրվում է **և** հոդից հետո՝ **այլնի, այլնից, այլնով** և այլն: **Այլք** ձևը ունի միայն առարկայական նշանակություն, թեք հոլովներից ունի միայն տրականի **այլոց** գրաբարյան ձևը: Ուրեմն այս դեպքում ևս ունենք **ոմն** բառի նույն յուրահատկությունը. եզակին ունի հատկանիշի, իսկ հոգնակին՝ առարկայի իմաստ: Թե՛ **ոմն**, թե՛ **այլ** դերանունների նման շեղումը ունի ընդհանուր պատճառ. գրաբարում այս դերանունների եզակիները ունեցել են նաև առարկայի իմաստ, որը ժամանակակից հայերենում չի պահպանվել, մինչդեռ հոգնակիները շարունակում են պահպանել այդ իմաստը: **Ոմանք** և **այլք** բառաձևերը հոդ չեն ստանում:

Անորոշ դերանունների հետ գործածվող գոյականները որպես կանոն հանդես են գալիս անորոշ առումով, որը բխում է նրանց իմաստից, ինչպես՝ **մի հարց, ինչ-որ կարծիք, այլ վերաբերմունք, որևէ յուրահատկություն** և այլն: Այս առումով առանձնանում են **այսինչ, այնինչ** դերանունները, որոնց հետ գոյականները միշտ որոշյալ առումով են հանդես գալիս, ինչպես՝ **այսինչ փողոցը, այնինչ պետությունը:**

Ժամանակակից հայերենում հատկանշային իմաստ ունեցող մի շարք դերանուններ փոխանվանական կիրառությամբ հոգնակին կազմում են օրինաչափ **-ներ** մասնիկով, որին հաջորդում է **-ը** կամ **-ն** հոդը՝ **այսպիսիները, այդպիսիները, այնպիսիները**: Սրանց կողքին գործածվում են նաև գրաբարյան **այսպիսիք, այդպիսիք, այնպիսիք** անօրինաչափ ձևերը, իսկ **ինչպիսի** և **որպիսի** դերանունների փոխանուն հոգնակին կազմվում է միայն գրաբարյան ձևով՝ **ինչպիսիք, որպիսիք:**

Անձնական դերանունների յուրաքանչյուր դեմքի համար ժամանակակից հայերենը ունի զույգ դերանուն՝ **ես- ինքս, դու- ինքդ, նա- ինքը, մենք- ինքներս, դուք- ինքներդ, նրանք- իրենք:** Սակայն եթե առաջին և երկրորդ դեմքերի զուգահեռ ձևերի միջև իմաստային էական տարբերություն չկա, ապա **ինքն** դերանունը ոչ միշտ է արտահայտում **նա** դերանվան իմաստը և հետևաբար ոչ միշտ է հնարավոր փոխարինել **նա** դերանունով: Եթե գործողության առարկան և գործողություն կատարողը համընկնում են, գործածվում է **ինքը** դերանունը, հակառակ դեպքում՝ **նա** դերանունը:

Հարցական և հարաբերական դերանունների առանձին, թե դերանվան մեկ տեսակ համարելու հարցը լեզվաբանների կողմից տարբեր կերպ է ընկալվում ու ներկայացվում, ընդ որում յուրաքանչյուրը փորձում է իր կարծիքը հիմնավորել համոզիչ փաստարկումներով: Այդ դերանունները մեկ տեսակի մեջ միավորող, նաև հակառակը պնդող լեզվաբանները ուշադրություն չեն դարձրել մի կարևոր հանգամանքի. դրանք բառային կազմով նույնը չեն. **ինչու, որերորդ, քանիերորդ**

դերանունները չեն կարող հանդես գալ նախադասություններ կապակցողի դերում, ուրեմն և հարաբերական համարվել չեն կարող: Մի հետաքրքիր դիտարկում ևս, որը հաստատում է այդ դերանունների առանձին տեսակ լինելը և անմիջական առնչություն ունի մեր քննության նպատակի հետ: **Որ** հարցական դերանունը առանց հոդի միայն հատկանիշի իմաստ ունի, հոգնակի **որոնք** ձևը հոդ չի ստանում և բացառապես առարկայի իմաստ ունի: Մինչդեռ **որ** հարաբերական դերանունը հոդով և առանց հոդի միայն առարկայի իմաստ է արտահայտում, հոգնակին՝ ևս:

Այսպիսով՝ անուն խոսքի մասերի համակարգում առկա անկանոնություններն ու շեղումները մասնավորապես և լեզվական բոլոր իրողությունները ընդհանրապես ունենում են իրենց ծագման, գոյության ու պահպանման հիմունքը, իսկ այդ ամենը լեզվի՝ որպես կենդանի երևույթի փոփոխականության, զարգացման ու կատարելագործման գործընթացի արտացոլումն է:

Բ. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ա) ԲԱՅԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից գրական հայերենի բայակազմության համակարգում սահմանված են կուռ օրինաչափությամբ ձևավորված քերականական օրենքներ: Այդ օրենքների գործադրման խնդրում գրական հայերենը անցյալի լեզվավիճակի համեմատությամբ զգալի մշակվածություն է հանդես բերում: Լեզվական նորմով սահմանված օրենքներից շեղվող կազմությունները, անկանոնությունները, բացառությունները արդի շրջանում խիստ նվազել են, սակայն չեն վերացել: Ստորև դրանք կներկայացնենք գործող օրինաչափությունների համեմատությամբ:

Ա. -Ան-, -են-, -ն-, -չ- բաղադրության քերականական ածանցներն ունեն այն ընդհանրությունը, որ մասնակցում են բայերի բաղադրմանը, և այն բայերը, որոնց մեջ հանդես են գալիս, առանց այդ ածանցների գոյություն ունենալ չեն կարող: Բացառություն են կազմում **-ան-** և **-են-** ածանցով բաղադրված մի քանի բայեր, որոնք ունեն իրենց ածանցազուրկ տարբերակը՝ **անձկանալ-անձկալ, լողանալ-լողալ, լվանալ-լվալ, ցանկանալ-ցանկալ, ունենալ-ունեմ, արբենալ-արբել, արժենալ-արժել, գիտենալ-գիտեմ, ուզենալ-ուզել** և այլն: Այս զուգահեռ ձևերը ժամանակակից հայերենում ունեն բառիմաստային և քերականական տարբերություններ: Բաղադրության-քերականական ածանցների մյուս առանձնահատկությունն այն է, որ որպես հիմքակազմիչ մասնիկներ՝ հանդես են

գալիս միայն ներկայի հիմքում՝ դրանով ստեղծելով ածանցավոր բայերի յուրահատուկ խոնարհման համակարգ: Հենց դրանով էլ այս ածանցները կատարում են նաև քերականական դեր: **-Ան-** ածանցը հանդես է գալիս **ա** լծորդության բայերի կազմության մեջ, մասնակցում այլ խոսքի մասերից վերածության, փոխակերպման իմաստով չեզոք սեռի բայերի կերտմանը[18]: Օրինակ՝ **բարիանալ, հարստանալ, խելոքանալ, խոնավանալ, մեծանալ** և այլն: Ժամանակակից հայերենում, սակայն, կան հնից ավանդված մի շարք բայեր, որոնց մեջ վերածման-փոխակերպման իմաստը մթագնել է: Այդպիսի բայերից են՝ **գողանալ, գոյանալ, զայրանալ, զարգանալ, զարմանալ, զլանալ, ընթանալ, իմանալ, հասկանալ, հեռանալ, հիանալ, հղանալ, հղփանալ, մահանալ, մոռանալ, սլանալ, ստանալ, սքանչանալ, վերջանալ, ուրանալ** և այլն: **Գողանալ, իմանալ, հասկանալ, մոռանալ, ուրանալ, ստանալ** և նման մի քանի բայեր ընդհանուր օրինաչափությունից շեղվում են նաև նրանով, որ ներգործական սեռի են:

-Ն- ածանցով բայերը **ե** խոնարհման բայեր են, սրանցից ժամանակակից գրական հայերենում շեղվում են **դառնալ** բայը և նրանով բաղադրված մի քանի բայեր՝ **վերադառնալ, անդրադառնալ**:

---

[18] ***Բեկանել, կլանել, ծանուցանել, սնուցանել, ուսանել, ուսուցանել, ընկողմանել*** *բայերը պատկանում են* ***ե*** *խոնարհման, սրանց մեջ առկա է* ***–ան-*** *ածանցը, որը, սակայն, քարացած է և խոնարհման բոլոր ձևերում պահպանվելով՝ քերականական հիմքակազմիչ դեր չի կատարում: Տե՛ս* Ս. Աբրահամյան և այլք, ***Ժամանակակից հայոց լեզու,*** *հ. 2, Ե., 1974, էջ253-255:*

-Ն- և **-չ-** ածանցներով բայերի անցյալի հիմքը արմատական է: Օրինակ՝ **գտնել-գտ+ա, տեսնել-տես+ա, թռչել-թռ+ա, դիպչել-դիպ+ա** և այլն[19]: **-Չ-** բայածանցի անկայունության պատճառով որոշ բայերի անցյալի հիմքը ժամանակակից հայերենում ունենում է երկու ձև՝ կանոնավոր՝ արմատական, և անկանոն՝ ցոյական. այսպես՝ **սառչել-սառա-սառեց, ուռչել-ուռա-ուռեց:** Արմատական ձևերը գործածությունից դուրս են մղվում:

Բ. Ժամանակակից գրական հայերենում կան պատճառականության իմաստի արտահայտման համադրական և վերլուծական միջոցներ, որոնց գործադրման սահմանները տարբեր են: Ներգործական բայերից պատճառական ածանցում են ունենում սահմանափակ թվով բայեր, պատճառական հարադրությամբ՝ **տալ** բայի զուգակցությամբ, հանդես են գալիս գրեթե բոլորը, և, ընդհակառակը, չեզոք սեռի բայերից ածանցման ենթարկվում են մեծ քանակությամբ բայեր, պատճառական հարադրությամբ՝ շատ քիչ բայեր: Նշված միջոցներով պատճառականության իմաստի արտահայտումը բնորոշ է ժամանակակից հայերենին որպես ընդհանուր երևույթ, սակայն կան մասնակի դեպքեր էլ, երբ բայը ո՛չ մեկ, ո՛չ մյուս միջոցով չի գործածվում պատճառական նշանակությամբ՝ **գալ, գնալ, ընկնել, կարողանալ, ունենալ** և այլն: Պատճառականության իմաստը ներգործական սկզբնատիպ ունեցող

---

[19] *Սակավաթիվ բայերի մեջ* ***-ն*** *և* ***-չ*** *ածանցներն արդեն ձուլվել են բայարմատին և այլևս չեն գիտակցվում որպես ածանց: Ժամանակակից հայերենում այդ բայերն ունեն անցյալի ցոյական հիմք, ինչպես՝* ***հառնել-հառնեց, զբոսնել-զբոսնեց, ոստնել-ոստնեց, կառչել-կառչեց*** *և այլն:*

ածանցված ձևերի մեջ ավելի ուժեղ է, և գրեթե իմաստային տարբերակում չկա պատճառական ձևի և կրկնակի պատճառականի միջև, զգացվում է միայն պատճառականության իմաստի որոշ սաստկացում, բնականաբար նման դեպքերում ոչ կանոնական և սխալ են **տալ** բայով հարադրված պատճառականի ձևերը, իսկ չեզոք սկզբնատիպ ունեցողների մեջ պատճառականության իմաստը ավելի թույլ է, ուստի անհրաժեշտ է լինում հարադրությամբ ցայտուն դարձնել ու ընդգծել չեզոք սկզբնատիպ ունեցող ածանցված ձևերի պատճառական քերականական նշանակությունը: «Պատճառական ածանցի և **տալ** բայի համատեղումը հնարավոր է, եթե չեզոք բայից կազմվում է ոչ միայն պատճառակերպ բայ, այլև դրան տրվում է պատճառական բայի նշանակություն: Օրինակ՝ **Հայերի ապստամբության առաջնորդ Գրիգոր Մամիկոնյանը կուրացնել տվեց Աշոտ Բագրատունի իշխանին՝ իրենց չմիանալու համար»**[20]**:**

Գործող օրինաչափության համաձայն՝ պատճառական – **ցն-** ածանցը դրվում է այդպիսի ածանցման ենթարկվող ինչպես պարզ, այնպես էլ բաղադրական-քերականական ածանց ունեցող բայերի անցյալի հիմքի վրա: **Ա** խոնարհման պարզ և **-ան-** ածանց ունեցող բայերի դեպքում **-ցն-** ածանցից առաջ դրվում է **-ա-** լծորդը, օրինակ՝ **կարդալ-կարդացնել, հեռանալ-հեռացնել**: **Ե** խոնարհման պարզ բայերի և **-են-** սոսկածանց ունեցող բայերի դեպքում **-ցն-** ածանցից առաջ դրվում է **-ե-**

[20] Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., ***Հայոց լեզու. Շնաբանություն,*** Ե., էջ 72, 2008:

լծորդը, օրինակ՝ **խմել-խմեցնել, մոտենալ-մոտեցնել**: Եթե բայի անցյալի հիմքը արմատական է, պատճառական ածանցը հանդես է գալիս առանց **-ա** կամ **-ե** լծորդի: Օրինակ՝ **փախչել-փախցնել, հասնել-հասցնել, մտնել-մտցնել** և այլն: Կազմության այս օրինաչափությունից շեղվում են մի քանի բայեր, որոնց անցյալի հիմքը թեկուզ արմատական է, բայց պատճառականի կազմության ժամանակ **-ցն-** բայածանցի հետ հանդես է գալիս **-ե** լծորդը՝ **իջնել-իջեցնել, հալչել-հալեցնել, սառչել-սառեցնել, ուռչել-ուռեցնել, պրծնել-պրծեցնել, համընկնել-համընկեցնել**:

Ածանցմամբ պատճառականի կազմության օրինաչափությունից շեղվում են նաև մի քանի բայեր: Դրանք են **դառնալ-դարձնել, վերադառնալ-վերադարձնել, անդրադառնալ-անդրադարձնել, չափազանցել-չափազանցնել:** Այս բայերում արմատական **ձ** և **ց** ձայնավորների մոտ պատճառական **ց**-ն ընկել է, և մնացել է միայն **ն**-ն:

Կրավորական բայերի պատճառականի կազմության օրինաչափ ձևից շեղվում է **գժվել** բայը, որի **վ**- ն պահպանվում է՝ **գժվեցնել**:

Ուտել բայն ունի պատճառականի երկու ձև՝ օրինաչափական **կերցնել** և ոչ օրինաչափական **ուտեցնել**: **Կերցնել** ձևը օրինաչափական է, քանի որ «թեև **ուտել** բայն անկանոն է, սակայն պատճառականի կազմության մեջ **կերցնել** ձևում հանդես է բերում կանոնավորություն՝ այն իմաստով, որ այս դեպքում պահպանում է պատճառական ածանցման ընդհանուր կանոնը, ածանցն ընդունում է անցյալ կատարյալի հիմքի

վրա՝ **ուտել-կեր-կերցնել**: Պարզ է, որ **ուտեցնել** ձևը յուրահատուկ կազմություն է և պատճառական ածանցման ընդհանուր կանոնից դուրս է գալիս, քանի որ բայն անցյալ կատարյալի հիմքում երբեք **ուտեց** ձևը չի ունենում. բայն այս դեպքում ձգտել է կանոնավորության, սակայն դարձել է յուրահատուկ անկանոնություն: Այստեղ բայարմատի վրա ավելացել է պատճառական **-ցն-** ածանցը **ե** ձայնավորի հետ՝ **ե** լծորդության բայերի արդեն կազմված ամբողջական պատճառական ձևերի նմանակության հիման վրա: Այս դեպքում դեր է կատարել ոչ թե նշված տիպի բայերի պատճառական սեռային առման կազմության հիմունքը, այլ արդեն կազմված ձևերի արտաքին կողմը **(խմեցնել//ուտեցնել)**»[21]:

Ըստ Պ. Բեդիրյանի՝ ժամանակակից գրական հայերենի լեզվական նորմի տեսակետից ընդունելի է միայն **կերցնել** տարբերակը[22]:

Ունենալով քերականական արժեք՝ **-ցն-** ածանցը բայերին տալիս է պատճառականության իմաստ. նրանով բաղադրված բայերն ունենում են իրենց ածանցազուրկ ձևերը: Կան օրինաչափությունից շեղվող մի քանի ներգործական բայեր, որոնք, ճիշտ է, խոնարհվում են պատճառական բայերի նման, բայց նրանցում, տարբեր հիմունքներով պայմանավորված, **-ցն**–ը ձեռք է բերել բայակազմական արժեք: Այդ բայերից են՝ **վերցնել, հատկացնել, յուրացնել, կասեցնել, իրացնել, հրամցնել, եզրակացնել** և այլն: Նույնը վերաբերում է նաև

---

[21] Աբրահամյան Ա., ***Բայը ժամանակակից հայերենում,*** Եր., 1962, էջ 574:

[22] Տե՛ս Բեդիրյան Պ., ***Հայ լեզուն և մեր խոսքը,*** Ե., 1999, էջ 96:

-ացիա և **-ֆիկացիա** ածանցներն ունեցող որոշ փոխառյալ բայերի, որոնց կազմության ժամանակ **-ել**-ի հետ անբաժան կերպով հանդես է գալիս **-ցն-** ածանցը: Օրինակ՝ **կոոպերացիա-կոոպերացնել, լիկվիդացիա-լիկվիդացնել, էվակուացիա-էվակուացնել, մոբիլիզացիա-մոբիլիզացնել, կոմբինացիա-կոմբինացնել, օկուպացիա-օկուպացնել, գազաֆիկացիա-գազաֆիկացնել, էլեկտրաֆիկացիա-էլեկտրաֆիկացնել**[23]**:**

Լինելով սեռածանց՝ չեզոք սեռի բայերից **-ցն-** ածանցը կերտում է ներգործական **(վազել-վազեցնել)**, իսկ ներգործական սեռի բայերից՝ կրկնակի ներգործական բայեր **(խմել-խմեցնել)**: Կան բացառություն կազմող չեզոք սեռի բնաձայնական մի շարք բայեր, որոնցում **-ցն-** ածանցը սեռի փոփոխություն առաջ չի բերում, ուղղակի բայերին տալիս է գործողության այլևայլ իմաստներ: Օրինակ՝ **խռմփալ-խռմփացնել, փռշտալ-փռշտացնել, թրմփալ-թրմփացնել, փնչալ-փնչացնել, բլբլալ-բլբլացնել** և այլն:

բ) ԱՆԿԱՆՈՆԱԻԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՅԱՍԵՌԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Որպես օրինաչափություն՝ ներգործական սեռի բայերը ստանում են **-վ-** ածանց և փոխում իրենց սեռը, սակայն համադրական և հարադրական կազմությամբ մի շարք բայեր շեղ-

[23] Տե՛ս Աբրահամյան Ս. և այլք, ***Ժամանակակից հայոց լեզու,*** հ. 2**,** Ե., 1974, էջ 245:

վում են ընդհանուր օրինաչափությունից. նրանք կրավորական ածանց չեն ստանում կամ նրանց կրավորականը գործածական չէ: Այդպիսի բայերից են՝

1. **գիտեմ, ունեմ, լվալ, հուսալ, ցանկալ** պակասավոր բայերը.

2.հիմնականում չեզոք սեռի իմաստ ունեցող, բայց իմաստափոխությամբ կամ խնդրառությամբ պայմանավորված ներգործական սեռի իմաստ ձեռք բերած բայերը, որոնց կրավորական ածանցմանը խանգարում է հիմնական սեռային իմաստը: Այդպիսի բայերից են՝ **անցնել, բխել, գրոհել, խեթել, ունկնդրել, աշխատել, ծաղկել, հոգալ, երկարել, ցնկնել, շաղել, սովորել, ստել, ողբալ, սգալ**[24]**:**

3. ոչ գործածական բայեր, որոնք հիմնականում կամ բացառապես ներգործական սեռի են, բայց **-վ-** ածանց չեն ստանում կրավորական կառուցվածքի պասիվ գործածության պատճառով: Ներգործական սեռի ոչ հաճախակի գործածություն ունեցող այդպիսի բայերից են՝ **ազդագրել, այպանել, աշտանակել, ապազինել, առինքնել, ավաղել, ավելել, արևազարդել, արվեստագործել, աքցանել, շեղջել, ողոքել, չակերտել, պատրել, ուսել, քացախտել, մասնիկավորել, մատռվակել, մաքրակարել, մեղապարտել, բոթել, մենակատարել,**

[24] *Կան չեզոք սեռի իմաստից իմաստափոխությամբ և խնդրառական փոփոխություններով նաև ներգործական սեռի իմաստ ստացած բայեր էլ, որոնք, ներգործականության իմաստով գործածվելով, ստանում են կրավորական ածանց: Այդպիսի բայերից են՝ ապրել-ապրվել,դիմավորել-դիմավորվել, նայել-նայվել, շնչել-շնչվել, սպասել-սպասվել, խաղալ-խաղացվել, հնչել-հնչվել, հսկել-հսկվել և այլն:*

միաբերել, միակերպել, միջնապատել, մոմապատել, մուտքագրել, շեփորել, բազմաձայնել, բոսորաներկել, մահապատճել, մանրանկարել, մանրէաջնջել, իրավաբանել, թաթել, թեղել, լայնել, կտտել, կտնել, ճաղել, մալել և այլն:

4. իրենց հիմնական իմաստով ներգործական և տարբեր հանգամանքներով պայմանավորված նաև չեզոք սեռի իմաստ ունեցող մի շարք բայեր, ինչպես՝ **ազազել, ափսոսալ, արտաժայթքել, արտավիժել, արմնկել, վիժել, բզբզել, մանրել** և այլն:

5. մի շարք գործածական բայեր, որոնք ունեն միայն ներգործական սեռի իմաստ: Դրանք են՝ **աղաչել, շնորհավորել, շալակել, շռայլել, վարել(հերկել), վարել(ղեկավարել), քշել (մի քայլ կռոմ մղել, գերի տանել), մղել (տանել), ուզենալ//ուզել, մաղթել, աղաչել, աղերսել, ճպել, վայելել:**

6. չեզոք սեռի բայ-բաղադրիչ ունեցող ներգործական սեռի հարադրավոր մի շարք բայեր[25]: Այդ բայերն ունեն դարձվածի արժեք: Դրանցից են՝ **հետևից ընկնել-*հետապնդել*, աչքին երևալ-*հավանել, կարևորություն ունենալ*, դուրը գալ-*հավանել*, աչքին դիպչել-*նկատել*, բերանը գալ-*մի բան հիշել և ասելու ցանկություն ունենալ*, ձեռքն ընկնել-*գտնել, մի բան ստանալ, շահել*, միտքն ընկնել-*հիշել*, միտքը գալ-*հիշել*, մտքից գնալ-*մոռանալ*, մտքից ելնել-*մոռանալ*** և այլն: Չնայած

[25] *Հասկանալի է, որ բայը, դառնալով հարադիր բայի բաղադրիչ, ոչ միշտ է պահում իր սեռային պատկանելությունը: Հարադիր բայերի սեռը չի նույնանում նրանց բայական բաղադրիչի սեռին, այլ որոշվում է հարադրի ու այդ բայական բաղադրիչի միացությունը կազմող բայական բարդության իմաստով:*

ամբողջական կապակցության ներգործական սեռի իմաստ արտահայտելուն՝ այս բայերը հանդես չեն բերում ներգործական սեռի բնորոշ հատկանիշներից ոչ մեկը. կրավորական չեն դառնում, ուղիղ խնդիր չեն ընդունում: Սա բացատրվում է չեզոք սեռի բայ-բաղադրիչի իմաստային և խնդրառական հատկանիշների պահպանմամբ: Նախադասության մեջ հանդես գալով ստորոգյալի դերով՝ այս բայերը դրսևորում են յուրահատուկ շարահյուսական կառուցվածք: Օրինակ՝ **«Նրա միտքն ընկան հետաքրքիր պատմություններ»** նախադասության մեջ տրամաբանական ենթական դրված է սեռական հոլովով, իսկ տրամաբանական ուղիղ խնդիրը նախադասության քերականական ենթական է: Առանձնահատուկ է **գլխի լինել** (հասկանալ) բայը, որի ուղիղ խնդիրը հիմնականում արտահայտվում է երկրորդական նախադասությամբ: Օր.՝ **Նա պիտի գլխի լինի, թե ինչ է սպասվում:** Չեզոք սեռի բայ-բաղադրիչ ունեցող ներգործական սեռի հարադիր բայերի մեջ առանձնանում են **գլխի ընկնել** և **երեսով գալ** դարձվածները, որոնք ուղիղ խնդիր են առնում, բայց կրավորական ածանցման չեն ենթարկվում, ինչպես՝ **գլխի ընկնել դասը, երեսով գալ արածը:**

7. ներգործական սեռի բայ-բաղադրիչ ունեցող ներգործական սեռի մի շարք բայեր, որոնց մեծ մասը դարձվածի կայունության պատճառով կրավորական ածանց չի ստանում և ուղիղ խնդիր էլ չի ընդունում, ինչպես՝ **աչքը բռնել, աչքն առնել-*հավանել,* ականջը քաշել–*հանդիմանել,* ականջը կտրել-*նշանել,* գլուխը տանել- *ձանձրացնել*** և այլն: **Աչքը**

բռնել, աչքն առնել և նման մի շարք այլ բայեր, նախադասության մեջ ստորոգյալի դերով հանդես գալով, կրկնում են չեզոք սեռի բայ-բաղադրիչ ունեցող հարադիր բայերով կազմված նախադասության շարահյուսական կառուցվածքը: **«Նրա աչքը վաղուց է բռնել այդ ձին»** նախադասության տրամաբանական ենթական (**նրա**) արտահայտված է սեռական հոլովով, իսկ տրամաբանական ուղիղ խնդիրը նախադասության քերականական ենթական է **(ձին)**: Իսկ **ականջը քաշել, ականջը կտրել** և այլ բայեր, հանդես գալով որպես ստորոգյալ, կառուցում են այնպիսի նախադասություն, որում գործողությունն իր վրա կրող անդամը՝ ուղիղ խնդիրը, արտահայտվում է տրական (դերանվան դեպքում՝ սեռական) հոլովով: Օրինակ՝ **Հայրը քաշեց տղայի ականջը: Դու մարդկանց բերանը լեզու դրեցիր**: Հնարավոր է, որ այս բայերի ուղիղ խնդիր չընդունելը պայմանավորված է հարադրության մեջ այդ բայերի արդեն իսկ ուղիղ խնդիր ունենալով: Դա հաստատվում է նրանով, որ զգալի թվով հարադիր բայեր, հարադրության մեջ ուղիղ խնդիր չունենալով, նախադասության կառուցվածքում ուղիղ խնդիր են ընդունում: Այդպիսի բայերից են՝ **բերան անել-*անգիր անել*, բերան ասել -*անգիր ասել*, բերան բերել-*հիշատակել*, բերան տանել -*որևէ բան բերանը դնել ուտելու նպատակով*, գլխի գցել-*հասկացնել, բացատրել*, գլխին քաշել-*միանգամից խմել*, բաց թողնել- *արձակել*, ձեռք առնել- *ծաղրել*, երես գցել -*շատ խնդրել*, երես տալ - *շփացնել*, միտքը գցել-*հիշեցնել*, ետ տալ -*վերադարձնել*, քամուն տալ -*վատնել*, մարդու տալ -*ամուսնացնել*** և այլն: Մի շարք բայեր էլ, չնայած ներգործական սեռի իմաստ արտահայտելուն, ընդունում են

բուն տրականով խնդիր, ինչպես՝ **ականջ դնել-**ինչի՞ն**, աչք դնել-**ինչի՞ն:

Ներգործական սեռի բայերի՝ ուղիղ խնդիր պահանջելը ընդհանուր կանոն է: Ուղիղ խնդիրը ժամանակակից հայերենում արտահայտվում է ուղղական հոլովով՝ իրի դեպքում և տրական հոլովով՝ անձի դեպքում: Ընդհանուր օրինաչափությունից շեղվում են **հաղթել, խաբել** և **ունեմ, ունենալ** բայերը: **Հաղթել և խաբել** բայերի մոտ ուղիղ խնդիրը թե՛ անձի, թե՛ իրի դեպքում դրվում է միայն տրական հոլովով՝ **հաղթել թշնամուն** և **հաղթել ցավին**, **խաբել ընկերոջը և խաբել կազմակերպությանը**: **Ունեմ** և **ունենալ** բայերը անձ ցույց տվող գոյականների դեպքում պահանջում են ուղղականաձև ուղիղ խնդիր, ինչպես՝ **Ես ունեմ հայր, մայր, եղբայր:** Սրանց կողքին անձնանիշ դերանուններով արտահայտված ուղիղ խնդիրը լինում է տրականաձև, ինչպես՝ **Ես քեզ իմ սրտում ունեմ: Մայրս ինձ ունեցել է քսան տարեկանում:**

Այսպիսով՝ ժամանակակից գրական հայերենի բայասեռի համակարգում առկա լեզվական նորմով սահմանված օրենքներից շեղվող կազմությունները, անկանոնություններն ու բացառությունները, որոնք կենդանի լեզվի փոփոխականության, զարգացման ու կատարելագործման գործընթացի արդյունք են, համակարգային կանոնական ձևերի կողքին գործում են որպես հակահամակարգային ձևեր:

գ) ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնց դերբայական և խոնարհման հարացույցները շեղվում են ընդհանուր օրինաչափությունից: Այդ բայերը կարելի է բաժանել երկու խմբի՝ անկանոն բայեր, անկանոն-պակասավոր բայեր: Ժամանակակից հայերենի անկանոն և անկանոն-պակասավոր բայերն են՝ **գալ, լալ, տալ, ասել, զարկել, բերել, ուտել, դառնալ, վեր կենալ, անել, դնել, տանել, առնել, ելնել, թողնել, տեսնել, լինել, եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժել, կենալ (մնալ), կենալ (ապրել):** Սրանց մեջ կան կազմությամբ պարզ և ածանցավոր բայեր: Շեղումները և անկանոնությունները երևան են գալիս հիմնականում անցյալի հիմքից կազմված բայաձևերում և հատկապես հրամայականում:

Գալ, լալ, տալ բայերի դերբայական հարացույցը թերի է. չունենալով անկատար ձևաբայ՝ այս բայերը սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը կազմում են անկանոն ձևով՝ համակատար դերբայով և օժանդակ բայով՝ **գալիս եմ/էի, տալիս եմ/էի, լալիս եմ/էի:**

Գալ, ուտել, լինել բայերի խոնարհման դեպքում առկա է տարարմատություն: Դրանց կատարյալի հիմքը կազմվում է համապատասխանաբար **եկ-, կեր-, եղ-** արմատներով:

Այժմ ներկայացնենք վերոհիշյալ բայերից յուրաքանչյուրի խոնարհման անկանոնությունները:

ԳԱԼ- Բայի ներկա և անցյալ ժամանակները կազմվում են ոչ թե անկատար դերբայից, այլ համակատար դերբայից, օր.՝ **գալիս եմ, գալիս էի**: Կատարյալի հիմքը այլ է՝ **եկ-,** որից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները՝ **եկել, եկած, եկող,** սահմանական եղանակի անցյալ կատարյալը, հրամայական եղանակի բայաձևերը:

Սահմանական եղանակի ներկա- **գալիս եմ, գալիս ես, գալիս է, գալիս ենք, գալիս եք, գալիս են.**

Անկատար անցյալ- **գալիս էի, գալիս էիր, գալիս էր, գալիս էինք, գալիս էիք, գալիս էին.**

Վաղակատար ներկա -**եկել եմ, եկել ես, եկել է, եկել ենք, եկել եք, եկել են.**

Վաղակատար անցյալ-**եկել էի, եկել էիր, եկել էր, եկել էինք, եկել էիք, եկել էին.**

Անցյալ կատարյալ-**եկա, եկար, եկավ, եկանք, եկաք, եկան.**

Հրամայական-**ե՛կ, եկե՛ք, արի՛, մի՛ եկ, մի՛ եկեք, մի՛գա, մի՛գաք:**

ԼԱԼ- Բայի ներկա և անցյալ ժամանակները կազմվում են ոչ թե անկատար դերբայից, այլ համակատար դերբայից, օրինակ՝ **լալիս եմ, լալիս էի**: Կատարյալի հիմքն է՝ **լաց-**, որից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները՝ **լացել, լացած, լացող,** սահմանական եղանակի անցյալ կատարյալը, հրամայական եղանակի մեկ տարբերակը:

Սահմանական եղանակի ներկա- **լալիս եմ, լալիս ես, լալիս է, լալիս ենք, լալիս եք, լալիս են.**

Անկատար անցյալ-**լալիս էի, լալիս էիր, լալիս էր, լալիս էինք, լալիս էիք, լալիս էին.**

Վաղակատար ներկա **–լացել եմ, լացել ես, լացել է, լացել ենք, լացել եք, լացել են.**

Վաղակատար անցյալ-**լացել էի, լացել էիր, լացել էր, լացել էինք, լացել էիք, լացել էին.**

Անցյալ կատարյալ-**լացեցի, լացեցիր, լացեց, լացեցինք, լացեցիք, լացեցին.** գործածական են նաև **լացի, լացիր, լացինք, լացիք, լացին կանոնավոր ձևերը:**

Հրամայական**- լա՛ց, լացե՛ք, մի՛ լաց, մի՛ լար, մի՛ լացիր, մի՛ լացեք:**

Ծանոթ. -**Լալ** բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերի փոխարեն հաճախ գործածվում են **լաց լինել** հարադրության խոնարհված բայաձևերը՝ **լաց եմ եղել, լաց եղա, լա՛ց եղիր** և այլն:

ՏԱԼ-Այս բայի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են համակատար դերբայից, օրինակ՝ **տալիս եմ, տալիս էի**: Ունի անցյալի երկու հիմք՝ ցոյական և անցոյական՝ **տու/տվեց: Տու** հիմքից **ու>վ** հնչյունափոխությամբ կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները՝ **տվել, տված, տվող**, անցյալ կատարյալ ժամանակի մեկ տարբերակը և հրամայական եղանակը: **Տվեց** հիմքով է կազմվում անցյալ կատարյալ ժամանակի մյուս տարբերակը:

Սահմանական եղանակի ներկա- **տալիս եմ, տալիս ես, տալիս է, տալիս ենք, տալիս եք, տալիս են.**

Անկատար անցյալ- **տալիս էի, տալիս էիր, տալիս էր, տալիս էինք, տալիս էիք, տալիս էին.**

Վաղակատար ներկա **-տվել եմ, տվել ես, տվել է, տվել ենք, տվել եք, տվել են**

Վաղակատար անցյալ—**տվել էի, տվել էիր, տվել էր, տվել էինք, տվել էիք, տվել էին**

Անցյալ կատարյալ-**տվեցի, տվեցիր, տվեց, տվեցինք, տվեցիք, տվեցին.** նաև՝ **տվի, տվիր, -, տվինք, տվիք, տվին.**

Հրամայական-**տու՛ր, տվե՛ք, մի՛ տուր, մի՛ տվեք:**

ԱՍԵԼ-Խոնարհվում է **ե** խոնարհման պարզ բայերի նման: Անկանոնություն է երևան գալիս միայն անցյալի հիմքում, նրանից կազմված անցյալ կատարյալ ժամանակում և հրամայական եղանակում: Անցյալի հիմքն է **ասաց**, անցյալ կատարյալ ժամանակը **ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին:** Հրամայական եղանակն է՝ **ասա՛, ասացե՛ք (**կանոնավոր՝ **ասե՛ք), մի՛ ասա,** (կանոնավոր՝**մի՛ ասեք):**

ԲԵՐԵԼ-Ունի անցյալի երկու հիմք՝ **բեր, բերեց**, որոնցից կազմվում են անցյալ կատարյալ ժամանակի զուգահեռ ձևերը: Դրանք են՝ **բերեցի, բերեցիր, բերեց, բերեցինք, բերեցիք, բերեցին՝** կանոնական **և բերի, բերիր, -, բերինք, բերիք, բերին** ոչ կանոնական ձևերը: Հրամայական եղանակի ձևերն են՝ **բե՛ր, մի՛ բեր** (անկանոն) և **բերե՛ք, մի՛ բերեք** (կանոնավոր):

ԶԱՐԿԵԼ -Ունի անցյալի երկու հիմք՝ **զարկ** և **զարկեց,** որոնցից կազմվում են անցյալ կատարյալի զուգահեռ ձևերը՝ **զարկեցի, զարկեցիր, զարկեց, զարկեցինք, զարկեցիք, զարկեցին (կանոնավոր) և զարկի, զարկիր, -, զարկինք, զարկիք, զարկին (անկանոն):** Անկանոն ձևերը ներկայումս հանձնարարելի չեն: Հրամայականը ունի **զա՛րկ, զարկե՛ք, մի՛ զարկ**

անկանոն **և զարկի՛ր, զարկեցե՛ք, մի՛ զարկիր, մի՛ զարկեք** կանոնավոր ձևերը:

ՈՒՏԵԼ- Անցյալի հիմքը փոխվում է՝ **կեր**, որից կազմվում են վաղակատար, հարակատար դերբայները՝ **կերել, կերած**, անցյալ կատարյալ ժամանակը՝ **կերա, կերար, կերավ, կերանք, կերաք, կերան,** հրամայական եղանակը՝ **կե՛ր, կերե՛ք, մի՛ կեր, մի՛ կերեք:** Արգելական հրամայականի համար գործածվում են նաև **մի՛ուտիր, մի՛ ուտեք** կանոնավոր ձևերը:

ԲԱՑԵԼ- Անցյալ կատարյալում կանոնավոր **բացեցի, բացեցիր, բացեց, բացեցինք, բացեցիք, բացեցին** ձևերին զուգահեռ գործածվում են **բացի, բացիր, -, բացինք, բացիք, բացին** անկանոն ձևերը: Հրամայականը ունի **բացի՛ր, մի՛ բացիր, մի՛ բացեք** կանոնավոր և **բա՛ց, մի՛ բաց** անկանոն ձևերը:

ԱՆԵԼ- Անցյալի հիմքն է **ար**, որից կազմվում են վաղակատար՝ **արել** և հարակատար՝ **արած** դերբայները, անցյալ կատարյալ ժամանակաձևը՝ **արեցի արեցիր, արեց, արեցինք, արեցիք, արեցին,** հրամայականը՝**արա՛, արե՛ք, մի՛ արա, մի՛ արեք (մի՛անիր, մի՛ անեք ձևերը** կանոնական են):

ԴՆԵԼ –Անցյալի հիմքն է **դիր**, որից կազմվում են վաղակատար՝ **դրել**, հարակատար՝ **դրած** դերբայները, անցյալ կատարյալը՝ **դրեցի, դրեցիր, դրեց, դրեցինք, դրեցիք, դրեցին** կամ **դրի, դրիր, -, դրինք, դրիք, դրին**, հրամայականը՝ **դի՛ր, դրե՛ք, մի՛ դիր, մի՛ դրեք: Մի՛ դնիր, մի՛դնեք ձևերը կանոնական են:**

ՏԱՆԵԼ-Անցյալի հիմքն է **տար,** վաղակատար, հարակատար դերբայները՝ **տարել, տարած**, անցյալ կատարյալ ժա-

մանակը՝ **տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան,** հրամայականը՝**տա՛ր, մի՛ տար, տարե՛ք, մի՛ տարեք: Մի՛ տանիր, մի՛ տանեք** ձևերը հնացած և անգործածական ձևեր են:

ԹՈՂՆԵԼ- Ունի անցյալի երկու հիմք՝ **թող/թողեց**: Կանոնավոր ձևից շեղվում են անցյալ կատարյալը՝ **թողեցի, թողեցիր, թողեց, թողեցինք, թողեցիք, թողեցին**, և հրամայականը՝ **թո՛ղ, մի՛թող, թողե՛ք, մի՛ թողեք: Մի՛ թողնիր, մի՛ թողնեք** ձևերը կանոնական են:

ԵԼՆԵԼ-Անկանոն են միայն հրամայականի **ե՛լ, մի՛ ել** տարբերակները:

ԱՌՆԵԼ –Անկանոն է միայն եզակի հրամայականում՝ **ա՛ռ, առե՛ք:**

ՏԵՍՆԵԼ –Անկանոն են **տե՛ս, մի՛ տես** տարբերակները:

ԼԻՆԵԼ-Անցյալի հիմքն է **եղ-**, որից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները՝ **եղել, եղած, եղող**, անցյալ կատարյալը՝ **եղա, եղար, եղավ, եղանք, եղաք, եղան**, հրամայականը՝ **եղի՛ր, եղե՛ք, մի՛ եղիր, մի՛ եղեք: Մի՛ լինիր, մի՛ լինեք** ձևերի անկանոնությունը հիմնավորվում է ներկայի հիմքից կազմությամբ:

ԴԱՌՆԱԼ-Անցյալի հիմքում վերականգնվում է **ձ** բաղադրիչը՝ **դարձ:** Անցյալի հիմքից են կազմվում վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները՝ **դարձել, դարձած, դարձող,** անցյալ կատարյալը՝ **դարձա, դարձար, դարձավ, դարձանք, դարձաք, դարձան:**

ՎԵՐ ԿԵՆԱԼ-Անկանոն են հարակատար՝ **վեր կացած**, ենթակայական՝ **վեր կացող**, վաղակատար՝ **վեր կացել** դերբայները, անցյալ կատարյալը՝ **վեր կացա, վեր կացար, վեր կացավ, վեր կացանք, վեր կացաք, վեր կացան**, հրամայականը՝ **վե՛ր կաց, վե՛ր կացեք, մի՛ վեր կաց, մի՛ վեր կացեք:**

Խոնարհման ժամանակ անկանոնություն են հանդես բերում նաև անկանոն-պակասավոր բայերը՝ **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժել, կենալ (մնալ), կենալ (ապրել)** բայերը: Սրանցից **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժել** բայերը ունեն միայն սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը **(եմ-էի, կամ-կայի, գիտեմ-գիտեի, ունեմ-ունեի)**, որոնք, ի տարբերություն կանոնավոր բայերի, պահպանում են գրաբարյան համադրական կառուցվածքը:

Կենալ (մնալ) բայը ունի միայն հրամայականի ձևեր՝ **կա՛ց, կացե՛ք, մի՛ կաց, մի՛ կացեք,** իսկ **կենալ (ապրել)** բայը՝ ըղձականի ձևեր՝ **կեցցեմ, կեցցես, կեցցե, կեցցենք, կեցցեք, կեցցեն**:

Ծանոթություն 1: Անկանոն են համարվում նաև անկանոն բայ բաղադրիչ ունեցող բոլոր հարադիր բարդությունները: Օրինակ՝ **պար գալ, ման գալ, գլուխ տալ, գլուխ բերել, ձեռ առնել** և այլն:

Ծանոթություն 2: Նշված բայերից բացի՝ որոշ լեզվաբաններ անկանոն-պակասավոր բայերի շարքում նշում են նաև **կարող եմ, կարելի է, համեցեք բայաձևերը: Կարող եմ** կառույցը համարվում է կա՛մ **կարողանալ** բայի հավելավոր ձև՝

կերպային տարբերությամբ[26], կա՛մ էլ ածականից և հանգույցից կազմված կառույց, որ մասնակցում է բաղադրյալ ստորոգյալի կազմությանը (**կարող է գրել, կարելի է գրել**)[27]:

Ըստ Ա. Սանթոյանի՝ «**Կարող եմ**-ը բայ է, քանի որ ժխտական խոնարհման կազմության ժամանակ **եմ** բայը փոխում է շարադասությունը և եզակի երրորդ դեմքում դառնում է **ի (կարող է- չի կարող):** Մինչդեռ բաղադրյալ ստորոգյալ լինելու դեպքում օժանդակ բայը չէր ենթարկվի շարադասական փոփոխության և չէր հնչյունափոխվի:

Կարող եմ բայն ունի միայն սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակաձևեր, որոնք կազմվում են «ենթակայական դերբայ+օժանդակ բայ» կաղապարով:

Այդպիսին է նաև **կարելի է (չի կարելի)** միադիմի բայը. գործածական է այս բայի սահմանական ներկա և անցյալ ժամանակաձևերի եզակի երրորդ դեմքը»[28]:

Համեցեք բայաձևը Հովի. Բարսեղյանը համարում է եղանակիչ մակբայ, Էդ. Աղայանը՝ ձայնարկություն[29]: Ըստ Ա. Սանթոյանի՝ այս ձևին դեռևս հատուկ է բայական կիրառությունը (հմմտ. **Վաղը երեկոյան համեցեք մեր տուն՝ ճաշի**)[30]:

---

[26] Տե՛ս Բարսեղյան Հովհ., ***Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն,*** Ե., 1953, էջ 432: Ասատրյան Մ., ***Ժամանակակից հայոց լեզու. Շնաբանություն,*** Ե., 1983, էջ 349:

[27] Տե՛ս Աբրահամյան Ս. և այլք, ***Ժամանակակից հայոց լեզու,*** հ. 3, Ե., էջ 161:

[28] Սանթոյան Ա., ***Ջահուկյանական ընթերցումներ-2008***, Ե., 2008, էջ 164-165:

[29] Տե՛ս Աղայան Է., ***Արդի հայերենի բացատրական բառարան***, Ե., 1976, էջ 808:

[30] Տե՛ս նույնը, էջ 808:

Գ. ԱՆԿԱՆՈՆԱԻԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայտնի է, որ մակբայը նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից միակն է, որ չի թեքվում: Սակայն մի շարք մակբայներ ունենում են համեմատության աստիճաններ, ինչպես՝ **արագ-ավելի արագ-ամենաարագ, հապճեպ-ավելի հապճեպ-ամենահապճեպ:** Հասկանալի է, որ մակբայի՝ նման քերականական կարգով հանդես գալը պայմանավորված է նրա՝ հատկանիշ ցույց տալով, այդ հիմունքով գոյականի վրա դրվելով և որոշչային կիրառությամբ հանդես գալով: Սակայն մակբայի համեմատության աստիճանների կազմությունն ու գործածությունը ունի որոշակի առանձնահատկություն. նախ՝ մակբայի գերադրական աստիճանը կազմվում է միայն **ամենա-** նախածանցով, երկրորդ՝ մակբայի գերադրական աստիճանը սովորական ձևով չի դրվում բայի վրա, այն գործածվում է հոդով, նախադաս՝ դրվելով բայից և նույնիսկ ենթակայից առաջ: Օրինակ՝ ***Արամը ամենաարագն է քայլում*** կամ ***Ամենաարագը Արամն է քայլում***[31]*:* Մակբայի գերադրական աստիճանը անհոդ գործածվում է միայն ենթակայական և հարակատար դերբայների հետ: Օրինակ՝ **ամենաարագ քայլող մարդը, ամենահապճեպ հավաքած խնձորը**: Ինչ վերաբերում է գերադրական աստիճանի՝ նկարագրական եղանակով

[31] Տե՛ս Աբրահամյան Ս., *և այլք, **Ժամանակակից հայոց լեզու,*** հ. 2, Ե., 1974, էջ 438-439:

կազմությանը, ապա մակբայը ածականի համեմատությամբ որևէ առանձնահատկություն հանդես չի բերում:

Մակբային հատուկ չէ նաև հոլովվելը, սակայն ժամանակի իմաստ ունեցող մի շարք մակբայներ ունեն տրականի ու բացառականի ձևերը, ինչպես՝ **այժմ-այժմվա-այժմվանից, առաջ-առաջվա-առաջվանից, վաղը-վաղվա-վաղվանից, երեկ-երեկվա-երեկվանից, այսօր-այսօրվա-այսօրվանից, հիմա-հիմիկվա-հիմիկվանից**:

Այս մակբայների տրականի ձևերը ունենում են բացառապես որոշչային կիրառություն, այսինքն՝ խոսքիմասային կիրառությամբ հարում են ածականներին:

Հոլովվելու հատկանիշով բնորոշվում են նաև մի շարք տեղի մակբայներ՝ **ներս-ներսից-ներսում, դուրս-դրսից-դրսում, դեմ-դեմից-դեմով, հեռու-հեռվից-հեռվում, դիմաց-դիմացից, ներքև-ներքևից-ներքևով-ներքևում:** Այս առանձնահատկությամբ էլ այս բառերը հակվում են դեպի գոյականները, և որոշ քերականներ էլ դրանք գոյական են համարում: Բայց որովհետև սրանց առարկայական նշանակությունը խամրած է, նրանց թե՛ ուղիղ, թե՛ թեք ձևերը հանդես են գալիս միայն պարագայական կիրառությամբ, ուստի դրանք պետք է համարել մակբայներ, մի բան, որ հաստատվում է նաև նրանց՝ որոշիչ չընդունելու հանգամանքով[32]:

[32] Տե՛ս Ասատրյան Մ., ***Ժամանակակից հայոց լեզու. Շնաբանություն,*** Ե., 1989, էջ 350:

Ժամանակի և չափի մակբայները որպես կանոն անտարբեր են բայի դրական և ժխտական խոնարհումների նկատմամբ, սակայն որոշ մակբայներ գործածվում են միայն բայի ժխտական ձևերի հետ, ինչպես՝ **ամենևին, բնավ, բոլորովին, դույզն-ինչ, երբեք, էլ, այլևս**: Վերջին շրջանում արևմտահայերենի ազդեցությամբ նկատելի է **այլևս** մակբայի գործածությունը նաև բայի դրական ձևերի հետ (օրինակ՝ Այդ իրողությունը այլևս փաստ է), ինչը ոչ միանշանակ է ընդունվում[33]:

Որպես կանոն կապերը դրվում են գոյականների, առարկա ցույց տվող դերանունների, գոյականաբար գործածված բառերի վրա՝ արտահայտելով տարբեր հարաբերություններ: Այս հանգամանքից էլ բխում է կապերի կարևոր հատկանիշներից մեկը՝ խնդրառությունը, որը հատուկ է բացառապես բոլոր կապերին: Սակայն որոշ կապեր կարող են դրվել նաև մակբայների վրա և այդ կիրառության մեջ (թեկուզ ժամանակավորապես) զրկվել խնդրառությունից, ինչպես՝ **մինչև հիմա, մինչև այժմ, դեպի ետ:**

Հայերենի քերականություններում կապը բնորոշվում է որպես չթեքվող խոսքի մաս, բայց որոշ կապեր հոլովման ձևեր են ունենում, ինչպես՝ **վրա-վրայից-վրայով, տակ-տակից-տակով, մեջ-միջից-միջով, մոտ-մոտից-մոտով,առջև-առջևից-առջևով, դեմ-դեմի-դեմից-դեմով:** Հասկանալի է, որ այս կապերի հոլովման մեջ դեր ունի այն հանգամանքը, որ դրանք առաջացել են գոյականներից և ունեն նյութական նշանակության որոշ հետքեր ինչպես ուղիղ, այնպես էլ թեք ձևերում:

[33] Տե՛ս Ավետիսյան Յու., Թելյան Լ.և այլք, ***Հայոց լեզվի ուղեցույց***, Ե., 2017, էջ 195:

Ըստ երևույթին դա էլ հնարավորություն է տալիս նաև հանդես գալու ստացական հոդով թե՛ եզակի, թե՛ հոգնակի ձևով՝ **մոտս, մոտներս, վրաս, վրաններս, հետդ, հետներդ** և այլն[34]:

Երկդիր կապերի շարադասության փոփոխությունը որպես կանոն չի ազդում խնդրառու բառի ձևավորման վրա, ինչպես՝ **բացի ինձնից-ինձնից բացի, անկախ կամքից-կամքից անկախ:** Այս առումով մի շարք կապեր հանդես են բերում յուրահատկություն: **Ընդդեմ** և **հակառակ** կապերի հետ նախադաս դիրքում գոյականներն ունենում են հոդով, հետադաս դիրքում՝ անհոդ կիրառություն: Օրինակ՝ **ժողովրդին ընդդեմ-ընդդեմ ժողովրդի, օրենքին հակառակ- հակառակ օրենքի**: Իսկ եթե որպես խնդրառու բառ հանդես գան **սա, դա, նա** դերանունները, ապա կունենանք նաև հոլովի տարբերություն, ինչպես՝ **ընդդեմ սրա-սրան ընդդեմ, հակառակ դրա-դրան հակառակ[35]:**

Շնորհիվ կապի շարադասությունից կախված՝ փոխվում է նաև առաջին ու երկրորդ դեմքերի անձնական դերանունների խնդրառությունը, ինչպես՝ **իմ(մեր) շնորհիվ-շնորհիվ ինձ(մեզ), քո(ձեր) շնորհիվ- շնորհիվ քեզ(ձեզ):**

Որոշ կապերի խնդրառությունը կախված է խնդրառու բառից. **առ, դեպի, մինչ(և), նախքան** կապերը տրական հոլով են պահանջում առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններից(առ մեզ, դեպի ինձ, մինչև քեզ, նախքան ձեզ), իսկ

---

[34] Տե՛ս Ասատրյան Մ., ***Ժամանակակից հայոց լեզու. Շնաբանություն,*** Ե., 1989, էջ 360-361:

[35] Տե՛ս նույնը, էջ 368:

չհաշված-ը՝ նաև երրորդ դեմքի դերանունից և անձնանիշ գոյականներից, մինչդեռ մյուս բոլոր խնդրառու բառերից պահանջում են ուղղականով ձևավորվածություն[36]:

Այս, այդ, այն դերանունները ներկայանում են որպես հատկանիշ ցույց տվող, բայց կարող են արտահայտել նաև առարկայի իմաստ: Եվ քանի որ առարկայական իմաստը ածանցյալ է, ուստի այս դերանունները չեն հոլովվում և թեք հոլովով խնդրառու բառ պահանջող կապերի հետ հանդես են գալիս ուղիղ ձևով, ինչպես՝ **բացի այդ, առանց այն** և այլն:

Ստորադասական շաղկապները արտահայտում են նախադասությունների ստորադասական հարաբերություններ՝ կապելով ստորադաս նախադասությունը գերադասի հետ: Այս տեսակետից անկանոնություն են դրսևորում **այսինքն, այն է** բացահայտման շաղկապները, որոնք, կապակցելով ստորադաս նախադասություններ (Մի առավոտ նա զգաց, որ շրջապատի համար դառնում է սովորական, **այսինքն՝** ավարտվում է հյուր լինելու շրջանը), կապակցում են նաև ստորադաս անդամներ: Օրինակ՝ Նա որոշեց շարունակել հոր մասնագիտությունը, **այն է՝** դարբնություն: Այստեղ **դարբնություն** բառով բացահայտվում է, թե որն է մասնագիտությունը: Այսինքն՝ **այն է** շաղկապով կապակցված են բացահայտիչ-բացահայտյալ ստորադասական հարաբերությամբ կապված անդամներ: Նույնպիսի յուրահատկությամբ բնորոշվում են նաև զուգադրական կազմությամբ ստորադասական մի

[36] Տե՛ս նույնը,, էջ 376-377:

շարք շաղկապներ, ինչպես՝ **չնայած…բայց, թեկուզ …սակայն, թեպետ… այնուամենայնիվ** և այլն: Կապակցելով նախադասության անդամներ՝ նրանք արտահայտում են այնպիսի հարաբերություն, որը ավելի մոտ է համադասությանը, քան ստորադասությանը: Օրինակ՝ **Թեպետ ընդունակ, բայց ծույլ այդ մարդուց ոչինչ չէր ակնկալում:**

Որպես կանոն ստորադասական շաղկապները դրվում են երկրորդական նախադասության սկզբում, այս առումով առանձնանում է **թե չէ** –ն, որը միշտ դրվում է ստորադաս նախադասության վերջում: Օրինակ՝ Ներս է մտնում **թե չէ**, սկսում է պատմել օրվա նորությունները:

Հետևանքի շաղկապները, ի տարբերություն մյուս բոլոր ստորադասական շաղկապների, լինում են գլխավոր նախադասության կազմում (Ուրիշ հյուրանոց չճարեցինք, ուրեմն բավարարվենք այս մեկով): Դրանք հաճախ լինում են պատճառի և հիմունքի շաղկապների զուգադրությամբ (**Քանի որ** բոլորն արդեն ներկա են, **ուստի** անցնենք մեր քննարկելիք հարցին): Հետևաբար առանձին կիրառվելիս նույնպես հետևանքի շաղկապները կարելի է համարել պատճառի և հիմունքի շաղկապներ՝ զուգադրության առաջին մասի զեղչումով:

Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերի համակարգում որպես յուրահատկություն կարելի նշել **երանի, երնեկ**, **ափսոս** վերաբերականների՝ գլխավոր նախադասություն դերով հանդես գալը: Օրինակ՝ **Երանի** նրան, ում հոգին խաղաղ է ընդմիշտ: **Ափսոս,** որ մենք երբևէ լավ իշխանություն չենք ունեցել:

ԳԼՈՒԽ 2
ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Քերականական անկանոնություններն ու բացառությունները վերաբերում են ոչ միայն ձևաբանական, այլև շարահյուսական իրողություններին: Դրանք ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգում առկա օրինաչափ ձևերից շեղվող, բայց լեզվական նորմով ընդունված անկանոնություններն են, որոնք կապված են նախադասության անդամների կապակցման եղանակների՝ առդրության, համաձայնության, խնդրառության հետ, պայմանավորված են շարադասությամբ, որոշ տիպի նախադասությունների, նախադասության անդամների, այդ թվում և բարդ նախադասությունների դրսևորման առանձնահատկությունների հետ: Ստորև կփորձենք դրանք ներկայացնել առանձին կետերով:

1. **Առդրությունը** նախադասության անդամների կապակցման եղանակներից մեկն է, որի դեպքում կապակցվող անդամներից որևէ մեկը չի պայմանավորում մյուսի քերականական ձևը[37]: Այդպես են կապակցվում որոշիչն ու որոշյալը, մակբայական պարագան ու ստորոգյալը, համադասական հարաբերությամբ միացած բազմակի անդամները: Բայց կա

[37] Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., ***Շարահյուսություն,*** Ե., 2009, էջ 11:

առդրության մի տեսակ, որի դեպքում լրացումն իր լրացյալին պարտադրում է կոնկրետ թիվ: Դա կոչվում է **թվային կախում**: Այսպես՝ հոգնակի որոշյալներ են պահանջվում՝

ա. երբ ածականով կամ գոյականով արտահայտված որոշիչները կրկնվում են (**մեծ-մեծ խոստումներ**, **տեսակ-տեսակ ծաղիկներ**, **մանր-մունր հարցեր**, **փոքր-փոքր շարժումներ, բա՛րձր-բա՛րձր սարեր**, **առուտ ու մուտ բաներ**, **լայն-լայն փողոցներ, շարան-շարան մարգարիտներ**, **ինչ-ինչ հանգամանքներ**, **թել-թել նյարդեր** և այլն)։ Օրինակ՝ Նա երկար կանգ առավ **մանր-մունր հարցերի** վրա։ **Ինչ-ինչ հանգամանքներ** խանգարեցին ծրագրի իրականացմանը։

բ. երբ որոշիչները ցույց են տալիս բազմազանություն **(անթիվ մարդիկ, բազմաթիվ երեխաներ, հազարավոր փախստականներ, անհամար առաջադրանքներ, տարբեր խնդիրներ, այլևայլ բնորոշումներ, այլազան հարցեր, բազում խոչընդոտներ, մի շարք դեպքեր)**։ Օրինակ՝ Ուսանողները ներկայացրին **տարբեր մոտեցումներ** նույն խնդրի լուծման համար։ **Հազարավոր մարդիկ** մասնակցեցին հանրահավաքին։

գ.երբ բազմակի որոշիչները վերաբերում են տարբեր որոշյալների **(կարմիր ու սպիտակ վարդեր, լայն ու ընդարձակ սենյակներ, խելոք ու բանիմաց ուսանողներ, կարճ ու երկար խողովակներ)**։ Օրինակ՝ Փնջեր կազմեցինք **կարմիր ու սպիտակ վարդերից**։ **Խելոք ու բանիմաց մասնագետները** միշտ պահանջված են։

դ. երբ որոշչի դերով գործածվում է **բոլոր** դերանունը (**բոլոր ուսանողները, բոլոր հարցերը, բոլոր հույսերը**)։ Օրինակ՝ **Բոլոր որոշումներն** ընդունվել են քննարկումներից հետո։

Եզակի որոշյալներ են պահանջում՝

ա. **յուրաքանչյուր**, **ամբողջ**, **ողջ, համայն, որևէ, որևիցէ, ամեն, ամեն մի, ոչ մի, մի** դերանունները (**ամբողջ աշխարհը, որևէ մեկը, յուրաքանչյուր մասնակից, մի մարդ**)։ Օրինակ՝ Եվ **ամեն բառ** ունի իր գաղտնիքը, որ մեծ մասամբ դարավոր է։ Սպիտակ թղթի առջև **ամեն վայրկյան** կարելի է կաթվածահար լինել։ (ՀՄ)

Գիշերն ամբողջ հիվանդ, խելագար,

Ես երազեցի արևի մասին…(ԵՉ)

Ամեն մի սիրտ ցավով լըցվեց մեր դարում,

Ցավոտ սըրտով աշխարհ լըցվեց մեր դարում…(ՀԹ)

Մի հավք զարկի ես մի օր.

Թըռավ, գընաց վիրավոր։

Թըռչում է միշտ իմ մըտքում

Թևը արնոտ ու մոլոր։ (ՀԹ)

Յուրաքանչյուր մարդ պարտավոր է սերտել իր նախնիների պատմությունը, և **որևէ հանգամանք** կամ որևիցե մեկը չպիտի խանգարի այդ գործընթացին։

բ. **ցանկացած** ածականը (**ցանկացած գործ**)։ Այս մեթոդը կարելի է կիրառել ցանկացած տեքստի վրա։

2. **Համաձայնությունը** կապակցման եղանակ է, որի դեպքում կապակցվող անդամները փոխադարձաբար պայմանա-

վորում են միմյանց քերականական ձևը[38]: Այդպես են կապակցվում նախադասության անդամներից ենթական և ստորոգյալը, բացահայտիչը և բացահայտյալը:

Ենթական և **ստորոգյալը** համաձայնում են թվով և դեմքով (դիմանիշ դերանուններով արտահայտված ենթակայի դեպքում): Համաձայն օրինաչափության՝ եզակի ենթական պահանջում է եզակի ստորոգյալ, հոգնակի կամ բազմակի ենթական՝ հոգնակի ստորոգյալ: Օրինակ՝ **Ծառը ծաղկեց: Ծառերը ծաղկեցին: Ծառ ու ծաղիկ ծաղկեցին: Ես պայքարում եմ** ազգային արժեքների պահպանման համար: **Դու նվիրեցիր** նրան նոր կյանք ու նոր շունչ:

Օրինաչափությունից կան շեղումներ՝

ա.եթե եզակի թվով ենթական ունի մեկից մեծ թվականով կամ թվականական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է արտահայտվել և՛ հոգնակի թվով (Փողոցով **սլանում էին երկու մեքենա**: Գետնին **ընկած էին մի քանի գերան**:), և եզակի՛ թվով (Ընդամենը **հինգ զորամաս է մասնակցում** զորավարժություններին: Քո աշխատանքում **հայտնաբերվել է մի երկու թերություն**:):

բ)եթե բազմակի ենթականերն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ Գարնանային **վար ու ցանքը եռուզեռի մեջ է**:

---

[38] Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., **Շարահյուսություն**, Ե., 2009, էջ 11:

գ)եթե բազմակի ենթականերն ունեն **յուրաքանչյուր**, **ամեն**, **ամեն մի**, **ոչ մի** դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ **Յուրաքանչյուր փողոց ու նրբանցք պետք է բարեկարգվի** ու **մաքրվի**:

դ)եթե նույն դեմքով բազմակի ենթակաները կապված են **կամ**, **կամ**...**կամ** շաղկապով, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ **Կասմունքի Անուշը կամ Արմինեն:**

ե)եթե բազմակի ենթականերից մեկը նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին, այն դրվում է եզակի թվով: Օրինակ՝ Այդ ծանր օրերին **մի հույս էր ուղեկցում** նրան և **մի հավատ:**

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով: Օրինակ՝ Արամն ու Անուշը մեր դասարանի **առաջավորներն են**: Բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝

ա. ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է: Օրինակ՝ **Դուք** մեր առաջին **ուսուցիչն եք եղել**:

բ. ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է: Օրինակ՝ **Երեխաները** մեր երկրի **ապագան են**:

գ.ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով: Օրինակ՝ Սրանք դեռ **երեխա են**:

Յուրաքանչյուր, ամեն մեկը, ոչ մեկը դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի

երրորդ դեմքով: Օրինակ՝ **Յուրաքանչյուրն** իր գործն է անում: Զարդաքանդակներից **ոչ մեկը** մյուսին չի կրկնում: **Յուրաքանչյուրս, ամեն մեկս, ոչ մեկս, յուրաքանչյուրդ, ամեն մեկդ, ոչ մեկդ** դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը դիմային անհամաձայնությամբ դրվում է երրորդ դեմքով: Օրինակ՝ **Ոչ մեկս** դա չպետք **է մոռանա**: **Ամեն մեկդ** մի բան **է ասում**:

Նշված դերանունների դեպքում ստորոգյալը կարող է դրվել առաջին կամ երկրորդ դեմքով, եթե հոգնակի թվով է: Օրինակ՝ **Յուրաքանչյուրս** մի առանձին **գործ ենք անում**: **Ամեն մեկդ** ձեր անելիքն **իմացեք:**

Համաձայնությամբ կապակցվում են նաև բացահայտիչն ու բացահայտյալը: Համաձայնությունը սովորաբար լինում է դեմքով, թվով, հոլովով և առումով: Դիմային համաձայնությունը կատարվում է անձնական դերանուններով և կամ դիմորոշ հոդերով: Օրինակ՝ **Ձեզ՝ այլախոհներիդ**, շատերը հանդուրժել չեն կարող: **Ես՝ երկրի զինվորս**, պատրաստ եմ պայքարել հանուն հայրենիքի:

Բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են չհամաձայնել՝

ա. թվով՝

Երիտասարդները՝ մեր երկրի **ապագան**, պետք է կրթված լինեն: Զրկվեցինք մեր ամենամեծ **արժեքից**՝ մեր նախնիների ժառանգած **տարածքներից**:

բ.հոլովով՝

Հյուրասենյակները կահավորված են թանկարժեք **կահ-**

կարասիով՝ բազմոցներ, սեղաններ, սպասքապահարան, գրապահարան:

Մեր ընտանիքը բաղկացած է **երեք հոգուց՝ ես, մայրս, հայրս**, և ապրում է երկսենյականոց բնակարանում: Առաջարկեց երեք թատերախաղերից՝ **«Վենետիկի վաճառականը», «Տիմոն Աթենացի», «Օթելլո»**, որևէ մեկն ընտրել:

գ. դեմքով՝ **Ես՝** իմ ընտանիքի **գլխավորը**, չէի կարող անտարբեր մնալ՝ տեսնելով այդ ամենը:

Գերազանցիկներդ՝ մեր **հույս ու ապավենը**, հանկարծ մեզ խայտառակ չանեք:

դ.առումով՝

Ադա՛մ, ահա քեզ **ընկեր՝** գեղեցիկ **Լիլիթը:** Դաշտ էր գնացել ամբողջ **գյուղը՝ կին ու տղամարդ, ծեր ու ջահել, աշխատող ու թոշակառու**:

Այցելեցինք Սյունիքի **քաղաքները՝ Գորիս, Կապան, Քաջարան, Մեղրի, Սիսիան:**

4. **Շարադասությունը** բառերի, նախադասության անդամների, բառակապակցության անդամների, բարդ նախադասության բաղադրիչների շարակարգային՝ գծային որոշակի հաջորդականություն է, որը հնարավորություն է տալիս ձևավորելու խոսքը, նրա միավորների դիրքը և հաջորդականությունը[39]: Նախադասության անդամների շարադասությունը կարող է լինել սովորական և շրջուն:

Ա. սովորական շարադասության դեպքում ենթական սովորաբար նախորդում է ստորոգյալին: Օրինակ՝ **Արևը մայր**

[39] Պետրոսյան Հ., ***Հայրենագիտական բառարան***, Ե., 1987, էջ 491:

է մտել: Դու հետաքրքիր մտքեր ունես:

Կան կառույցներ, սակայն, որոնցում ուղիղ շարադասությամբ՝ ենթական հաջորդում է ստորոգյալին: Դա բնորոշ է հատկապես անորոշ առումով ենթակա պարունակող նախադասությանը, օրինակ՝ Սրտիս վրա **իջնում է անդորը**: Այսպիսի դեպքերում ենթակայի նախադաս դիրքն է շրջուն, օրինակ՝ **Անդորը է իջնում** սրտիս վրա:

Բ. Տարաբնույթ բազմակի որոշիչների սովորական շարադասության նախընտրելի կարգը հետևյալն է՝ գոյական որոշիչ - դերբայ որոշիչ - ածականական դերանուն որոշիչ-հարաբերական ածական որոշիչ - թվական (կամ թվականական դերանուն կամ թվանիշ ածական) որոշիչ - որակական ածական որոշիչ - որոշյալ: Սրանք չեն տրոհվում:

Շարադասության նշված կարգը կարող է խախտվել՝

ա. հետադաս բազմակի որոշիչների դեպքում: Օրինակ՝ **Դա մի փոքրամարմին կին էր՝ տարօրինակ, ծեր, առողջությունից զրկված, անհրապույր տեսքով և շատախոս:** Այդպիսի հետադաս որոշիչները միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով:

բ. այն դեպքում, երբ առկա է որոշիչ-որոշյալի կայուն կապակցություն՝ տերմինի արժեքով (**ելից մատյան, մարած փոխաբերություն, խոսքի մաս, սեղանի թենիս** և այլն), որին նախորդում են մյուս բոլոր ազատ որոշիչները՝ ընդունված կարգով: Օրինակ՝ Վերլուծենք **մի քանի հետաքրքիր մարած փոխաբերություն**: **Այս բոլոր սպասարկու խոսքի մասերն** արդեն ուսումնասիրել ենք:

գ. այն դեպքում, երբ բազմակի որոշյալներից ամեն մեկն ունի իր որոշիչը, իսկ բոլորը միասին ունեն ևս մի ընդհանուր որոշիչ, որը, անկախ իր արտահայտությունից, նախորդում է մյուս բոլորին: Օրինակ՝ Գրքում տեղ են գտել **բազմաթիվ դաշնամուրային մանրանվագներ, մանկական երգեր, ժողովրդական խմբերգեր:**

5. Ներգործական սեռի բայերի՝ ուղիղ խնդիր պահանջելը ընդհանուր կանոն է: Ուղիղ խնդիրը ժամանակակից հայերենում իրի դեպքում արտահայտվում է ուղղական հոլովով, անձի դեպքում՝ տրական հոլովով: Ընդհանուր օրինաչափությունից շեղվում են **հաղթել, խաբել** և **ունեմ, ունենալ** բայերը: **Հաղթել և խաբել** բայերի մոտ ուղիղ խնդիրը թե՛ անձի, թե՛ իրի դեպքում դրվում է միայն տրական հոլովով՝ **հաղթել թշնամուն** և **հաղթել ցավին**, **խաբել ընկերոջը և խաբել կազմակերպությանը**: **Ունեմ** և **ունենալ** բայերը անձ ցույց տվող գոյականների դեպքում պահանջում են ուղղականաձև ուղիղ խնդիր, ինչպես՝ **Ես ունեմ հայր, մայր,եղբայր:** Սրանց կողքին անձնանիշ դերանուններով արտահայտված ուղիղ խնդիրը լինում է տրականաձև, ինչպես՝ **Ես քեզ իմ սրտում ունեմ: Մայրս ինձ ունեցել է քսան տարեկանում:**

6. Հանգման խնդիրը լրացնում է բոլոր սեռերի բայերին, մի շարք բաղադրյալ ստորոգյալների: Երբեմն լրացնում է զգացական ձայնարկություններին (**ամոթ, վայ, թու** և այլն), որոշ վերաբերականների **(երանի, ափսոս, ավաղ)**: **Օրինակ՝ Ամոթ** քեզ նման գոված իգիթին: (ՀԹ)

7. Բազմակի տարադաս որոշիչները նախադաս դիրքում չեն կապվում **և, ու, կամ, թե** շաղկապներով և ստորակետով

չեն տրոհվում: Այս օրինաչափությանը չեն ենթարկվում բազմակի հետադաս որոշիչները, որոնք, անկախ իրենց արտահայտության ձևից, միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով: Օրինակ՝ Հեծյալները՝ **կիսամերկ, կմախքացած, դեմքի մշուշոտ արտահայտությամբ և լուռումունջ**, օրորվում էին թամբերի վրա:

8.Անվանական է այն անդեմ նախադասությունը, որի գերադաս անդամը, որպես կանոն, արտահայտված է գոյականով կամ գոյականական դերանունով, երբեմն՝ ածականով, թվականով, մակբայով[40]:

Լինում են նաև անդեմ նախադասություններ, որոնց գերադաս անդամը արտահայտված է լինում վերաբերականով կամ ձայնարկությամբ: Օրինակ՝ **Վայ** մեզ՝ մոլորյալներիս: **Ո՛չ** ինքնակոչ նախագահին: **Երանի** հոգով աղքատներին: **Ա՛յ** քեզ բան… **Ահա** և ես: **Ահավասիկ** իմ ներդրումը: **Ափսոս, հազար ափսոս** մեր կորուստներին:

9.Ժամանակակից հայերենում գրեթե բոլոր հաստատական նախադասությունները (բացի մի քանի անվանական անդեմ նախադասություններից) ունեն իրենց համապատասխան ժխտական ձևերը և արտահայտում են ժխտական իմաստ: Սակայն ինչերանգով պայմանավորված՝ բարդ ստորադասական նախադասություններում **որ** շաղկապով կապակցված ժամանակի պարագա երկրորդականը, որի ստորոգյալը, թեև

[40] Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., ***Շարահյուսություն***, Ե., 2009, էջ 111:

ժխտական բայով է արտահայտված, դրական իմաստ է արտահայտում: Օրինակ՝

Արջին որ ծառի հետև **չտեսավ**, հոգին դարձավ կորեկի հատ: (ՎԱ)

Որ այդ ավերածությունները **չտեսա**, աչքերս մթնեցին, իսկ որ մերոնց կորստի մասին էլ **չիմացա**, սիրտս կանգնեց: (ՎԱ)

10. Հայերենում ժխտական խոնարհումը նշույթավոր է. այն իրացվում է **չ** մասնիկով և **ոչ, մի** ժխտականներով: Բացի սրանցից՝ ժխտման նշույթավորումը կատարվում է ժխտական նախածանցներով **(ան, ապ, դժ, տ, չ)**, ժխտական դերանուններով **(ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը, ոչ մի)** և ժխտական վերաբերականներով **(ոչ, չէ, բնավ, երբեք)**: Կան որոշ կառույցներ, որոնցում ժխտումը նշույթավորված չէ. այդ դեպքում հնչերանգի դերը ավելի է մեծանում: Թեև նման կառույցներում հնչերանգը հաստատական է, բայց արդյունքում ժխտական իմաստ է արտահայտում: Օրինակ՝

-Տղադ ի՞նչ արեց, աշխատանք ճարե՞ց:

-Բա ի՞նչ արեց, ճարեց (այսինքն՝ չճարեց):

-Աղջիկդ այս տարի համալսարան ընդունվե՞ց:

-Հա՛ ընդունվեց (այսինքն՝ չընդունվեց):

- Արա՛մ, մայրդ հիվանդ սկեսուրին այցելեց, գոնե գյուղ գնա՞ց:

-Հա՛, բա ի՞նչ արեց, հա՛մ գյուղ գնաց, հա՛մ էլ տատիկին տեսավ (այսինքն՝ չգնաց, չտեսավ):

Հայերենում տարածված է ժխտման չնշույթավորված մի ձև ևս, դա ժխտման արտահայտումն է հարցական հնչերանգով: Օրինակ՝

Ու՞ր է այստեղ ծաղիկ, որ հավաքենք (այսինքն՝ ծաղիկ չկա):

Ո՞վ է դաս սովորել, որ ես սովորեի (Ոչ ոք չի սովորել, ես էլ չեմ սովորել):

Ի՞նչ խելոք բան ես արել, որ գլուխ ես գովում (խելոք բան չես արել):

Որոշ դեպքերում էլ, հնչերանգով պայմանավորված, բարդության հաստատական բաղադրիչ նախադասությունն արտահայտում է ժխտում, իսկ ժխտականը՝ հաստատում:

Սա հատուկ է հատկապես հռետորական հարցմանը.

Ինձ մի՛ սպանիր, ղամեդ տա՛ր հեռու...

Քո քույրը չե՞մ ես, իմ Մոսին չե՞ս դու (ՀԹ):

Աղջի, սևասիրտ, քո ահը կտրի,

Աղջիկը մենակ ձորը կմտնի՞(ՀԹ):

Առաջին երկտողում հարցականով հաստատական իմաստ է արտահայտված (Ես քո քույրն եմ, դու իմ Մոսին ես:)

Իսկ երկրորդ երկտողում հարցականով ժխտում է արտահայտվել (Աղջիկը մենակ ձորը չի մտնի):

11. Բայական ստորոգյալներին տրվում են հետևյալ հարցերը՝ ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ է անելու (լինելու), ի՞նչ է արել (եղել), ի՞նչ արեց (ի՞նչ եղավ), ի՞նչ պիտի անի (լինի) և այլն:

Անվանաբայական ստորոգյալներին տրվող հարցը վերաբերում է ստորոգելիին՝ ո՞վ է, ի՞նչ է, ովքե՞ր են, ինչե՞ր են, ովքե՞ր կլինեն, ի՞նչ դարձավ, ի՞նչ եղավ, որտե՞ղ է, ե՞րբ էր, ո՞րերորդն է, որքա՞ն է, ինչպիսի՞ն է և այլն։

Կամ, գիտեմ, ունեմ պակասավոր բայերով արտահայտված ստորոգյալները ոչ մի հարց չեն ընդունում: Օրինակ՝

Հարդի հոտ **կա** քո ձեռքերում։ (ՀՍ)

Այդ գործում ես **չկամ,** պարո՛ն։ (ՍԳ)

Այն կինն էլ **ուներ** խշխշան շորեր...քորոցը նարնջագույն գլուխ ուներ։ (ԱԲ)

Չգիտեմ՝ որտեղից է գալիս Ջութակի հեկեկանքը տխուր։ (ՎՏ)

Շարահյուսական անկանոնությունները կարող են դրսևորվել նաև **բարդ ստորադասական նախադասության** շրջանակում:

Ինչպես հայտնի է, բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները կապված են ստորադասական հարաբերությամբ: Գերադաս է կոչվում բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող այն նախադասությունը, որը քերականորեն գերադաս(լրացյալ) է և ունի ստորադաս նախադասություն[41]: Ստորադաս է կոչվում բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող այն նախադասությունը, որը քերականորեն ստորադաս է և լրացնում է գերադաս նախադասության միտքը[42]:

---

[41] Աբրահամյան Ս.Գ., ***Հայոց լեզու, Շարահյուսություն***, Ե.,2004, էջ 143:

[42] Տե՛ս նույնը, էջ 144։

Ս.Աբրահամյանի տված սահմանումից ենթադրելի է, որ գերադաս և ստորադաս նախադասությունների գոյությունը պայմանավորված է միմյանցով: Սակայն հանդիպում են բազմաբաղադրիչ նախադասություններ, որոնցում կա ստորադասական շաղկապ ունեցող և զիջման պարագայական հարաբերություն արտահայտող ստորադաս նախադասություն, որը այդ կառույցում չունի իր լրացյալ գլխավոր նախադասությունը: Բերենք օրինակ՝

Ասում են՝ Լուսինեն քննություններին լավ չի պատրաստվում. թեև չարժե, որ ես նրա համար այդքան մտահոգվում եմ:

Ընդգծված ստորադաս նախադասությունը բերված կառույցում չունի իր գերադաս նախադասությունը, այն կարելի է միայն մտքով վերականգնել (**թեև չարժե, բայց մտահոգվում եմ**):

Ստորադաս նախադասությունները իրենց բնույթով բազմազան են: Նրանք հիմնականում համապատասխանում են պարզ նախադասության անդամներին, բայց տարբերվում են նրանցից որոշ հատկանիշով: Կառուցվածքային հատկանիշով պայմանավորված՝ ստորադաս նախադասությունը պարզ նախադասության համապատասխան անդամի համեմատությամբ ավելի հարուստ բովանդակություն է արտահայտում: Չկա ստորոգյալին համապատասխանող երկրորդական նախադասություն, ստորոգելի երկրորդական նախադասությունը համապատասխանում է ստորոգելիին: Կան նաև ամբողջ գլխավոր նախադասությանը լրացնող երկրորդական նախադասություններ:

Այսպիսով՝ այն ստորադաս նախադասությունները, որոնք համապատասխանում են գերադաս նախադասության որևէ անդամի, լինում են՝ ա) գլխավոր անդամներին համապատասխանող, բ) ստորադաս անդամներին համապատասխանող ստորադաս նախադասություններ, որոնք բաժանվում են գոյականական անդամի լրացում և բայական անդամի լրացում ենթատեսակների:

Իրենց լրացյալի բնույթով պայմանավորված՝ անկանոն պետք է համարել այն ստորադաս նախադասությունները, որոնց լրացյալը **կոչական** է, **վերաբերական** կամ **ձայնարկություն:** Բերենք օրինակներ՝

Հա՛յր մեր, **որ երկնքում ես, սուրբ լինի անունը քո:**

Ա՛յ տղա, **որ կանգնած ես վերջում, մոտեցի՛ր:**

Ընդգծված բառերը կոչականներ են, որ ստացել են որոշիչ ստորադաս նախադասություն լրացում:

Ափսոս, **որ քեզ ավելի շուտ չեմ հանդիպել:**

Երանի **նրան, ով իր հայրենիքում է ապրում:**

Երկու գերադաս նախադասություններում դիմավոր բայը զեղչված է, բայց ենթադրելի է (առաջինում՝ **է**, երկրորդում՝ **տանք**), այդ դեպքում համապատասխանաբար կունենանք ենթակա և հանգման խնդիր ստորադաս նախադասություններ:

Կան հարաբերական դերանունով կապակցված բարդ ստորադասական նախադասություններ, որոնց երկրորդական նախադասությունը փոխարինում է միաժամանակ գլխավոր նախադասության գերադաս անդամին կամ լրացնում նրան:

Այդպիսի երկրորդականները բնույթ չունեն: Օրինակ՝ **Ահա նա, ում ես փնտրում էի: Ամառ էր, երբ նրան հանդիպեցի:**

Ինչպես հայտնի է, ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է բառական և քերականական եղանակներով: Որպես բառական միջոցներ հանդես են գալիս շաղկապներ, շաղկապական բառեր և հարաբերյալներ:

Որպես հարաբերյալներ հանդես են գալիս հիմնականում ցուցական դերանունները, ընդ որում միայն **և** արմատական հնչյուն ունեցողները: Ս. Աբրահամյանի կարծիքով՝ հարաբերյալի դերում կարող են հանդես գալ նաև որոշյալ դերանուններ և համապատասխան իմաստ արտահայտող բառակապակցություններ, ինչպես՝ **ամենը, այն ամենը, ամեն բան, ամեն մեկը, բոլոր(ը), յուրաքանչյուր(ը), յուրաքանչյուր ոք**[43]: Օրինակ՝ **Հայտնի չէ *այն ամենը*, ինչ կատարվել է: Ստուգիր *ամենը*, ինչ գրված է:** Ընդգծվածները պետք է համարել հարաբերյալներ, քանի որ հակառակ դեպքում պետք է ստանանք որոշիչ երկրորդական նախադասություններ, մինչդեռ որոշյալ դերանունը որոշիչ չի ընդունում:

Ինչ վերաբերում է **բոլոր** և **ամեն բան** լեզվական միավորներին, ապա Ս. Աբրահամյանը դրանք համարում է տարարժեք՝ հարաբերյալ կամ գերադաս նախադասության լիարժեք անդամ. «Այսպես՝ **Մենք տեսանք բոլորին, ովքեր եկել էին** նախադասության ստորադաս բաղադրիչը ուղիղ խնդիր է, եթե մենք այն ընկալում ենք որպես **բոլորը** հարաբերյալին փոխարինող լրացում (հմմտ. **Մենք տեսանք եկածներին**):

[43] Տե՛ս նույնը, էջ 141:

Բայց այդ ստորադաս նախադասությունը կարող է նաև ըմբռնվել որպես **բոլորը** բառի լրացում (հմմտ. **Մենք տեսանք եկած բոլորին**), և այդ դեպքում այն կլինի որոշիչ ստորադաս նախադասություն»[44]: Կարծում ենք՝ այստեղ կարող ենք ունենալ նաև երրորդ տարբերակը՝ բացահայտիչ երկրորդական նախադասություն: Այսպես՝ **Մենք տեսանք բոլորին՝ եկածներին:**

Քննվող երևույթի շրջանակներում անկանոնություն պետք է համարել **այն** հարաբերյալի հետ **բան, ժամանակ, տեղ, ձև** կապական բառերի գործածությունը: Օրինակ՝

Մենք հասանք այն բանին, որ մեզ ընդունեցին: Մենք հասանք այն տեղը, որտեղ մեզ սպասում էին: Մենք հասանք այն ժամանակ, երբ արդեն ուշ էր: Մենք կվարվենք այն ձևով, ինչպես մեզ հարմար է:

Առաջին օրինակում ունենք հանգման անուղղակի խնդիր ստորադաս նախադասություն, երկրորդում՝ տեղի պարագա, երրորդում՝ ժամանակի պարագա, չորրորդում՝ ձևի պարագա:

Ակնհայտ է, որ այս գոյականների հարաբերյալ ընկալվելուն նպաստել է **այն** ցուցական դերանունը, որը տրամաբանական շեշտի կրողն է, **բան** բառի ընդհանրական իմաստ ունենալը, իսկ **տեղ, ժամանակ** և **ձև** բառերի տարաժեք ընկալումը (գոյական - կապ) պատճառ է դառնում երկրորդական նախադասությունների համանունության:

---

[44] Տե՛ս նույնը, էջ 163:

Օրինաչափորեն շաղկապները և շաղկապական բառերը հանդես են գալիս ստորադաս նախադասության մեջ, իսկ հարաբերյալները՝ գերադաս: Ըստ Հ. Զաքարյանի և Յու. Ավետիսյանի՝ հետևանքի շաղկապները, ի տարբերություն մյուս բոլոր ստորադասական շաղկապների, լինում են գլխավոր նախադասության կազմում[45]: Ըստ նրանց՝ «Ուրիշ հյուրանոց չճարեցինք, ուրեմն բավարարվենք այս մեկով» նախադասության երկրորդ բաղադրիչն է գլխավոր, որովհետև առաջին բաղադրիչ նախադասության մեջ կարելի է ավելացնել պատճառի ու հիմունքի շաղկապներ: Օրինակ՝ **Քանի որ ուրիշ հյուրանոց չճարեցինք, ուրեմն բավարարվենք այս մեկով**[46]:

Սակայն այս տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում «Զանգեցի, բայց նա չպատասխանեց» նախադասությունը պետք է համարել բարդ ստորադասական, քանի որ առաջին բաղադրիչ նախադասության սկզբում կարելի ավելացնել զիջական որևէ շաղկապ (**թեև, թեկուզ, չնայած** և այլն), ինչպես՝ **Թեև զանգեցի, բայց նա չպատասխանեց:**

Մեր կարծիքով՝ հետևանքի շաղկապները (**ուստի, ուրեմն, հետևապես, հետևաբար, այնպես որ**) գտնվում են ստորադաս նախադասության մեջ, եթե ունենք հետևանքի ստորադաս նախադասություն(**Անձրևում է, ուստի պետք վերադառնանք**), և այս իրողությունը կանոնական է, և գտնվում են գլխավոր նախադասության մեջ որպես զուգադրական շաղկապի բաղադրիչ, եթե ունենք պատճառի կամ հիմունքի

---

[45] Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., **Հայոց լեզու. Շարահյուսություն**, Ե., 2009, էջ 133:

[46] Տե՛ս նույն տեղում:

պարագա երկրորդական նախադասություն (**Քանի որ անձրևում է, ուստի պետք է վերադառնանք**):

Ստորադաս և գերադաս նախադասությունների կապակցման հարցում հարաբերյալների դերն այն է, որ ակնարկում են երկրորդական նախադասության իմաստը, կատարում են շարահյուսական այն դերը, ինչ որ ստորադաս նախադասությունը: Ինչպես նշվեց, որպես հարաբերյալ հանդես են գալիս հիմնականում ցուցական դերանունները, երբեմն՝ որոշյալ դերանուններ ու համապատասխան իմաստ արտահայտող բառակապակցություններ[47]:

Սակայն կան ստորոգելի ստորադաս նախադասությամբ կառույցներ, որոնցում որպես հարաբերյալ հանդես են գալիս **ոչ այլ ինչ, ոչ այլ ոք** արտահայտությունները, իսկ կապակցող շաղկապն է՝ **եթե ոչ**-ը[48]: Օրինակ՝ **Սա <u>ոչ այլ ինչ</u> է, <u>եթե ոչ</u> աչքակապություն: Սա <u>ոչ այլ ոք</u> է, <u>եթե ոչ</u> մեր հակառակորդը:**

Ինչպես գիտենք, գերադաս նախադասության մեջ որպես կանոն հարաբերյալը կարող է լինել կամ չլինել:

Հարաբերյալը պարտադիր է, երբ՝

1. հոլովով չի համաձայնում հարաբերականի հետ, և ինքն է հուշում ստորադաս նախադասության բնույթը, օրինակ՝ **Նեղացել էի նրանցից, ովքեր իրենց խոսքի տերը չեղան:**

2. ստորադաս նախադասության և դրա անմիջական լրացյալի միջև կան այնպիսի բառեր, որոնք կարող են լրացյալ կարծվել, օրինակ՝ **Սա այն տղայի գիրքն է, որ երեկ կորել էր:**

---

[47] Աբրահամյան Ս., ***Հայոց լեզու, Շարահյուսություն***, Ե., 2004, էջ 141:

[48] Տե՛ս Պառնասյան Ն., ***Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում***, Ե., 1961, էջ 72:

3. եթե ունենք ստորոգելի ստորադաս նախադասություն[49]:

Անկանոնություն պետք է համարել առանց հարաբերյալի ստորոգելի ստորադաս նախադասությունը, ինչպես՝ **Սա չէ՞, որ երեկ հայրենասիրությունից է խոսում: Դու չե՞ս, որ մոլորեցնում էիր մեր հայրենակիցներին**: Հարաբերյալը կարող է չարտահայտվել նաև ստորոգելի ստորադասական ունեցող այնպիսի գլխավոր նախադասություններում, որոնց հանգույցը **համարել** վերացական բայն է: Օրինակ՝ **Ես կհամարեմ, որ գրպանիցս փող եմ կորցրել[50]:**

Քննվող երևույթին հակառակ՝ կան դեպքեր, երբ հարաբերյալը բացառվում է:

Ըստ Հ. Զաքարյանի ու Յու. Ավետիսյանի՝ հարաբերյալը բացառվում է, եթե որոշիչ երկրորդական նախադասության որոշյալը անորոշ առումով է **(Ահա քեզ նորություն, որ կհետաքրքրի միայն քեզ)**, կամ միակ հնարավորն է և երկրորդական նախադասությունից հեռացած չէ **(Նայիր, ահա մոտենում է հայրս, որ հենց նոր ժամանեց Մոսկվայից)**[51]: Կարծում ենք, որ որոշիչ երկրորդական նախադասության անորոշ առումով որոշյալը կարող է հարաբերյալ ունենալ՝ **Ահա քեզ այնպիսի նորություն, որ կհետաքրքրի միայն քեզ:**

Հետաքրքիր և անկանոն պետք է համարել այն երևույթը, որ հարաբերյալի առկայություն-բացակայությունը որոշիչ դեր

---

[49] Տե՛ս Աբրահամյան Ս., նույնը, էջ 150:

[50] Տե՛ս Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., նույնը, էջ 146:

[51] Տե՛ս Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., նույնը, էջ 141-142:

է կատարում չափի և հիմունքի ստորադաս նախադասությունների բնույթի տարբերակման հարցում: Այսպես՝ «Նա **այնքան** խելոք չէ, ինչքան կարծում էինք» նախադասության մեջ հարաբերյալի առկայության դեպքում ունենք չափի պարագա ստորադաս նախադասություն, բացակայության դեպքում՝ հիմունքի պարագա[52]:

Համանման իրողություն ունենք նաև վերաբերության խնդիր - ուղիղ խնդիր ստորադասների դեպքում: Օրինակ՝ Հարցնում էին այն մասին, թե ինչ է կատարվել: Հարաբերյալի բացակայության դեպքում կունենանք ուղիղ խնդիր ստորադասականով նախադասություն:

Ստորադաս նախադասությունների գերակշիռ մասը փոխարինում է գերադաս նախադասության բացակա կամ ձևականորեն առկա (հարաբերյալի դեպքում) որևէ անդամի, որով պայմանավորված՝ ստանում է համապատասխան անվանումը՝ որոշիչ ստորադաս, ուղիղ խնդիր ստորադաս, չափի պարագա ստորադաս նախադասություն:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ միայն ստորոգելի ստորադաս նախադասությունը փոխարինում է ոչ թե գերադաս նախադասության ստորոգյալին, այլ նրա մի մասին՝ ստորոգելիին, ուստի և կոչվում է ստորոգելի ստորադաս նախադասություն: Սակայն հանդիպում են նաև այնպիսի ստորադաս նախադասություններ, որոնք փոխարինում են գերադաս նախադասության բաղադրյալ ենթակայի

[52] Տե՛ս Աբրահամյան Ս., նույնը, էջ 190:

մի մասին: Դա լինում է այն դեպքում, երբ գերադաս նախադասության ենթական բացառական հոլովով ստորադաս անդամ ունեցող բառակապակցություն է:

Բերենք օրինակներ՝

Ուսանողներից նրանք, ովքեր մասնակցել էին ճամբարին, գոհ էին:

Պատգամավորներից նրանք, ովքեր չէին քվեարկել, ունեին իրենց պատճառները:

Շարադասությունը բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցության միջոցներից է. այն ընդգրկում է ոչ միայն գերադաս ու ստորադաս բաղադրիչների շարադասությունը, այլև այդ բաղադրիչների համապատասխան անդամների դիրքն ու դասավորության հաջորդականությունը: Նախ անդրադառնանք առաջինին:

Բարդ ստորադաս նախադասության շարադասությունը քննելիս ելակետ է ծառայում գերադաս բաղադրիչը, որի հանդեպ ստորադաս բաղադրիչը կարող է ունենալ երեք դիրք. այն կարող է նախորդել, հաջորդել գերադաս նախադասությանը կամ ընդմիջել այն: Լեզվական այս իրողությունը վերաբերում է բարդ ստորադասական նախադասությունների մեծագույն մասին: Սակայն սրանց կողքին կան պարտադիր շարադասություն ունեցող ստորադաս նախադասություններ, որոնք կա՛մ միայն նախորդում, կա՛մ միայն հաջորդում են գերադաս նախադասությանը:

Պարտադիր նախադաս են այն ստորադաս նախադասությունները, որոնք՝

1. կապակցվում են զուգադիր շաղկապներով, ինչպես՝ **Թեև ցուրտ էր, բայց շարունակում էին աշխատել: Ինչպես դեղնած տերևներն են փարվում ոտքերիս և խշխշում, այնպես էլ երկու բարակ ձեռքեր ձգվում են դեպի ինձ և խնդրում:**

2. կապակցվում են **թե չէ** շաղկապով, ընդ որում նշենք, որ այս շաղկապը նախադասության վերջում դրվող միակ ստորադասական շաղկապն է: Օրինակ՝ **Մտավ թե չէ, սկսեց մեղադրել[53]:**

3. ունեն **եթե**-ի և **երբ**-ի զեղչում, ինչպես՝ **(Եթե) Աստված եք՝ փշրե՛ք նրանց բոլոր մոմերը: (Երբ) Լույսը բացվի՝ կգնանք:**

Ստորադաս նախադասությունները կարող են լինել նաև պարտադիր վերջադաս: Այդպիսիք են՝

1. **որ**-ի զեղչումով ստորադաս նախադասությունները, ինչպես՝ Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես[54]:

2. այն ենթակա ստորադաս նախադասությունները, որոնց գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտված է **թվալ, երևալ, մնալ, պատահել** և նման մի քանի բայերով կամ անվանական բաղադրյալ է **(անհայտ է, հայտնի է, հասկանալի է, զարմանալի է, լավ է, հաճելի է, ցավալի է, հնարավոր է, ցավալի է, հնարավոր է, անսպասելի է** և այլն):

Օրինակ՝ **Թվում է, թե ամեն բան արդեն ասվել է: Զարմանալի է, որ այդ ճիվաղը դեռ կենդանի է:**

---

[53] Տե՛ս Պապոյան Ա., Բադիկյան Խ., **Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն**, Ե., 2003, էջ 283:

[54] Տե՛ս Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., նույնը, էջ 141:

3. որոշիչ և բացահայտիչ ստորադաս նախադասությունները, որոնք նախադաս չեն կարող լինել, որովհետև պարտադիր հաջորդում են լրացյալին, ինչպես՝ **Մտրակը դառնում է սև օձ, որ զարկում է ձիու ողորկ մարմնին: Հետո, երբ արդեն սպիտակ մազեր կային նրա գլխին, Հազրոյի քոչը ելավ այս բարձր սարը**[55]:

Սովորաբար վերջադաս են լինում նաև ստորոգելի և ներգործող խնդիր երկրորդական նախադասությունները[56]: Օրինակ՝ **Մեր ցանկությունն այն է, որ աշխարհում լինի կայուն խաղաղություն: Ով** հարաբերականով կապակցվող ստորոգելի երկրորդական նախադասությունները կարող են լինել նաև նախադաս: Օրինակ՝ **Ով պայքարում է հանուն պատմական արդարության, իմ իդեալը նա է:**

Ինչ վերաբերում է բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների համապատասխան անդամների դիրքի ու դասավորության հաջորդականությանը, ապա պետք է նշել, որ որպես կանոն ստորադասական շաղկապները հանդես են գալիս ստորադաս նախադասության սկզբում (**թե չէ**-ն բացառություն է): Սակայն երբեմն, հատկապես ժողովրդախոսակցական ոճի ազդեցությամբ շաղկապից կամ հարաբերական բառից առաջ կարող են դրվել այլ անդամներ: Օրինակ՝ **Շոգը որ սկսվում է, աշխատել չի լինում: Արամին եթե բան պատահած չլինի, եկած կլինի**[57]:

---

[55] Տե՛ս նույն տեղում:

[56] Տե՛ս Աբրահամյան Ս., նույնը, էջ 150:

[57] Տե՛ս Աբրահամյան Ս., նույնը, էջ 141:

Մասնագիտական գրականության մեջ ուղիղ և ներգործող խնդիրները կոչվում են սեռի խնդիրներ, քանի որ այդ խնդիրները ենթադրում են համապատասխանաբար ներգործական և կրավորական սեռի բայերի առկայություն: Նույնը վերաբերում է նաև ուղիղ և ներգործող խնդիր ստորադաս նախադասություններին, որոնք պետք է լրացնեն գերադաս նախադասության մեջ առկա համապատասխանաբար ներգործական և կրավորական սեռերի բայերին:

Ս. Աբրահամյանը նշում է, որ ներգործող անուղղակի խնդիր կարող են ունենալ նաև մի շարք չեզոք սեռի բայեր, ինչպես՝ **ամաչել, գոհանալ, նեղանալ, սարսափել, սոսկալ** և այլն: Օրինակ՝ **Արամը սարսափում է նրանից, որին առաջ իր բարեկամն էր կարծում: Մարդն ավելի նեղանում է նրանից, ումից ավելի շատ սպասելիքներ ունի**[58]:

Կարծում ենք՝ այս երկրորդական նախադասությունները ավելի մոտ են պատճառի պարագա երկրորդականներին: Սակայն Ս. Աբրահամյանը իրավացիորեն առանձնացնում է մի շարք չեզոք սեռի բայեր, որոնք կարող են ունենալ ներգործող խնդիր. դրանք իմաստով համարժեք են կրավորական սեռի բայերին, ինչպես՝ **ընդունելություն գտնել-ընդունվել, վիրավորանք ստանալ-վիրավորվել, հավանության արժանանալ-հավանվել** (գործածական չէ) և այլն[59]: Բերենք օրինակներ**: Այդ առաջարկությունը ջերմ ընդունելութ-**

[58] Տե՛ս Աբրահամյան Ս., նույնը, էջ 168:

[59] Տե՛ս նույն տեղում:

յուն գտավ (ջերմորեն ընդունվեց) նրանց կողմից, որոնց համար թանկ է խաղաղությունը: Նախագիծը հավանության արժանացավ (հավանվեց) նրանց կողմիովքեր մրցույթ էին հայտարարել: Ակնհայտ է, որ այս դեպքում ևս ունենք անկանոնություն:

Ստորադաս անդամներին համապատասխանող ստորադաս նախադասությունները ունեն երկու տեսակ՝ գոյականական անդամի լրացում և բայական անդամի լրացում: Միանշանակ է, որ բայական անդամի լրացում ստորադաս նախադասությունները լրացնում են միայն բայով կամ իր կազմի մեջ բայական բաղադրիչ ունեցող անդամի[60]:

Գերադաս նախադասության անվանական բաղադրյալ ստորոգյալը նույնպես կարող է ունենալ բայական անդամի լրացումներ: Այսպես, չափի պարագա ստորադաս նախադասությունները կարող են լրացնել ածական ստորոգելիի: Օրինակ՝ **Նա այնքան գեղեցիկ էր, որ անհնար էր չնայել:**

Ոչ օրինաչափ է այն երևույթը, որ պարագա ստորադաս նախադասությունները կարող են լրացնել բայական անդամի լրացմանը՝ դառնալով լրացման լրացում ստորադաս նախադասություններ: Այսպես, կան ձևի պարագային լրացնող նպատակի, չափի, պատճառի պարագա երկրորդական նախադասություններ: Բերենք օրինակներ: **Նա այդ ասաց հայերեն, որ իրեն չհասկանան: Աղջիկը այնքան գեղեցիկ երգեց, որ**

---

[60] Տե՛ս նույնը, էջ 160 և Պապոյան Ա., Բադիկյան Խ., **Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն**, Ե., 2003, էջ 312:

գրավեց բոլորի ուշադրությունը: Կինը շշուկով է խոսում, որովհետև բոլորը քնել էին:

Անկանոնություն պետք է համարել այն, որ պարագա երկրորդական նախադասությունները կարող են լրացնել ոչ միայն բայով, այն ածականով արտահայտված գոյականական անդամի լրացմանը, նաև անվանական բաղադրյալ ստորոգյալի գոյականով արտահայտված ստորոգելիին: Օրինակ՝

1. **Սա պատառոտված գիրք է, որովհետև անխնամ են վարվել հետը** (պատճառի պարագա ստորադաս նախադասությունը լրացնում է բայով արտահայտված որոշչին):

2. **Սա հետաքրքրական գիրք է, քանի որ շատերն են կարդում**(հիմունքի պարագա ստորադաս նախադասությունը լրացնում է ածականով արտահայտված որոշչին):

3. **Սա տուն է, որովհետև այստեղ ապրողներ կան** (պատճառի պարագա ստորադաս նախադասյտնը լրացնում է գոյականով արտահայտված ստորոգելիին)[61]:

4.**Սա շինանյութ է, քանի որ այն օգտագործվում է շինարարության մեջ** (հիմունքի պարագա ստորոդաս նախադասությունը լրացնում է գոյականով արտահայտված ստորոգելիին):

Երկրորդական նախադասությունները հաճախ ունենում են իրենց հոմանիշ դերբայական դարձվածները: Որոշակի կանոններով մեծ մասամբ հնարավոր է (կան չփոխակերպվող կառույցներ) դերբայական դարձվածով պարզ

[61]Տե՛ս Աբրահամյան Ս., նույնը, էջ 161:

նախադասությունը վերածել բարդ ստորադասական նախադասության և հակառակը: Գործող այս ընդհանուր օրինաչափությանը հակասում են էական բայով կազմված բաղադրյալ անվանական ստորոգյալով բացահայտիչ, որոշիչ, երբեմն էլ ենթակա, ստորոգելի երկրորդական նախադասությունները, որոնք փոխակերպվում են առանց դերբայական դարձվածի, որպես անվանական բառակապակցություն: Օրինակ՝

Ինքը, որ երդվյալ ուխտավոր է, պիտի դառնա մենակյացի կյանքով ապրող մի նահատակ: Ինքը՝ երդվյալ ուխտավորը, պիտի դառնա մենակյացի կյանքով ապրող մի նահատակ:

Վերջին պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի արձանիկ, որ անչափ հին է: Վերջին պեղումների ժամանակ հայտնաբերվել է անչափ հին մի արձանիկ:

Այս գիրքը կլինի նրա նվերը, ով ամենից ընթերցասեր է: Այս գիրքը կլինի ամենից ընթերցասերի նվերը:

Ինձ կփոխարինի նա, ով այս գործի ճշմարիտ նվիրյալն է: Ինձ կփոխարինի այս գործի ճշմարիտ նվիրյալը:

Մեր պատվիրակը նա է, ով այդ գործի մանրամասներին ամենից տեղյակն է: Մեր պատվիրակը այդ գործի մանրամասներին ամենից տեղյակն է[62]:

Բարդ ստորադասական նախադասությունը և նրա փոխակերպված տարբերակ պարզ նախադասությունը իմաստով նույնական և հայերենի լեզվամտածողության դրսևորման երկու տարբեր ձևեր են. նրանք իրարից անկախ և իրար

[62] Տե՛ս Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.,, նույնը, էջ 185:

կողքի հավասարապես գոյակցում են լեզվում և չեն բացառում մեկը մյուսին: Փոխակերպման արդյունքում առաջացած դերբայական դարձվածը կատարում է նույն պաշտոնը, ինչ բնույթի որ եղել է երկրորդական նախադասությունը:

Անվիճելի է, որ դերբայական դարձվածի գերադաս անդամին լրացնող անդամները պետք լինեն բայական անդամի լրացումներ՝ խնդիրներ և պարագաներ: Սակայն հանդիպել ենք մի հետաքրքիր իրողության, որը անկասկած անկանոն պետք է համարել: Եթե որոշիչ ստորադաս նախադասությունը լրացնում է գերադաս նախադասության գոյականաբար գործածված բայի, ունենում ենք որոշչի պաշտոն կատարող դերբայական դարձված, որը լրացնում է բայի: Օրինակ՝ **Այդպես դատում են այն քայլածները, որոնք ակտիվ մասնակցել են: Այդպես դատում են ակտիվ մասնակցած քայլածները: Պարգևներից հրաժարվեցին այն նստածները, որոնք արդեն մեկ անգամ պարգև են ստացել: Պարգևներից հրաժարվեցին արդեն մեկ անգամ պարգև ստացած նստածները:**

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությամբ յուրահատուկ կապակցություն պետք է համարել նաև ուրիշի ուղղակի խոսքի կապակցությունը հեղինակի խոսքի հետ: Հասկանալի է, որ այսպիսի կապակցության մեջ չեն գործածվում շաղկապներ, հարաբերական բառեր. կապակցությունը կատարվում է շարահարությամբ[63]: Օրինակ՝

[63] Տե՛ս Աբրահամյան Ս.Գ., նույնը, էջ 164:

Կաթողիկոսը մոլեգնեց, այլայլվեց մռայլ լռության մեջ և գոչեց.

-Պատրաստվեցե՛ք սխրագործության (Դ.Դ.):

Քննված իրողությունները փաստում են, որ բարդ ստորադասական նախադասություններում շարահյուսական անկանոնությունը հիմնականում արտահայտվում է՝ կապված գերադաս նախադասության բացակայության դեպքում ստորադասի առկայության, ստորադասի՝ գերադաս նախադասության ոչ ենթադրելի բառին լրացնելու, գերադաս նախադասության մեջ պարտադիր հարաբերյալ ունենալու-չունենալու, ստորադաս նախադասության՝գլխավորի բառակապակցությամբ արտահայտված ենթակայի մի մասին փոխարինելու, որոշ կառույցներում երկրորդական նախադասությունների կայուն շարադասության, գոյականին լրացնող պարագա և բային լրացնող որոշիչ երկրորդական նախադասությունների գոյության, երկրորդական նախադասության փոխակերպման արդյունքում դերբայական դարձվածի փոխարեն անվանական բառակապակցության առաջացման, գլխավոր նախադասության մեջ պարագա ստորադաս նախադասություն ունեցող պարագաների առկայության և մի շարք այլ հանգամանքների հետ:

Այսպիսով՝ ժամանակակից գրական հայերենի շարահյուսական համակարգում առկա լեզվական նորմով սահմանված օրենքներից շեղվող կազմությունները, անկանոնություններն ու բացառությունները, որոնք կենդանի լեզվի փո-

փոխականության, զարգացման ու կատարելագործման գործընթացի արդյունք են, համակարգային կանոնական ձևերի կողքին գործում են որպես հակահամակարգային ձևեր։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962:
2. Աբրահամյան Ս. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974:
3. Աբրահամյան Ս. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976:
4. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1974:
5. Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու. Շարահյուսություն, երկրորդ մաս, Ե., 1975:
6. Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981:
7. Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967:
8. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
9. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:

10. Աղայան Է., Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2009:
11. Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007:
12. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հատոր բ, Ե., 1964:
13. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989:
14. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Ե., 1989:
15. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու. Ձևաբանություն, Ե., 2008:
16. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2009:
17. Խաչատրյան Լ.,Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
18. Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Ե., 1953:
19. Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը, Ե., 1999:
20. Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
21. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (հեղ.՝ Ավետիքյան Գ., Սյուրմելյան Խ., Ավգերյան Մ.), Ե., 1979:

22. Պետրոսյան Հ., Գոյականի առումները հայերենում, Ե., 1960:
23. Պապոյան Ա., Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003:
24. Պառնասյան Ն., Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Ե., 1961:
25. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե.,1974:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ…… 3
ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ…… 5
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԵՎ ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒԹ-
ՅՈՒՆՆԵՐԸ…….. 8
Գլուխ 1
ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ……... 13
Ա.ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ……... 13
Բ. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ…….. 32
ա.ԲԱՅԱԿԱՁՄԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ…… 32
բ.ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՅԱՍԵՌԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ……... 38
գ.ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԵՎ
ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՆԵՐՈՒՄ……... 44
Գ.ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ
ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ…… 52
Գլուխ 2
ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ……... 58
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…….. 89

ՀԱՍՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ
ՇՈՂԵՐ ՄԱՌԼԵՍՏԻ ՄԻՆԱՍՅԱՆ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԱՀՅ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Խմբագիր՝ Ռ.Մովսեսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Խաչատրյան

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Արևշատյանի

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2026